



**«ԿԱՆԱՆՑ ԵՎ ԱՂՋԻԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԲՈՆՈՒԹՅՈՒՆԻՑ
ԶԵՐԾ ԿՅԱՆՔԻ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆՆ
ՈՒՂՂԱԾ ԵՆԹԱԴԻՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ»
ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԶԵԿՈՒՅՑ**



Հետազոտող՝ Հասմիկ Պետրոսյան
Լեզվական խմբագրումը՝ Ազնիվ Նասյանի
Ձևավորումը՝ «Չարտադրիկ»-ի

Հետազոտությունը պատրաստվել է «Կանանց և աղջիկների համար բռնությունից զերծ կյանքի համապարփակ քաղաքականությանն ուղղված ենթադրամաշնորհային ծրագրի» շրջանակում:

«Կանանց և աղջիկների համար բռնությունից զերծ կյանքի համապարփակ քաղաքականությանն ուղղված ենթադրամաշնորհային ծրագիրն» իրականացվում է Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիայի կողմից [«ՀԱՎԱՍԱՐ - ԵՄ-ն հանուն կանանց իրավագործման Հայաստանում»](#) ծրագրի շրջանակում:

Ծրագիրն իրականացվում է ՕքսեՉեն հիմնադրամի, «Եվրոպական գործընկերություն հանուն ժողովրդավարության» ՀԿ-ի, «Նիդերլանդների հելսինկյան կոմիտե» ՀԿ-ի, «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ-ի, «ՎԻՆՆԵԹ Գորիս» զարգացման հիմնադրամի կողմից, «Վիննեթ Շվեդիա» ՀԿ-ի հետ համագործակցությամբ: Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

Այս հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիան, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

Ուսումնասիրությունից որևէ հատված օգտագործելու և մեջբերելու պարագայում համապատասխան հղում կատարելը պարտադիր է:

ISBN 978-9939-9361-0-9



9 789939 936109

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՆԻԿԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՎԱՍԱՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ, ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲԱՑԵՐԸ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
2. «ԿԱՆԱՆՑ ԵՎ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ՀԱՎԱՍԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԱՎԱՍԱՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ, ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲԱՑԵՐԸ	4
3. ՍԵՌԱԿԱՆ ՈՏՆՁԳՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ. առկա կանխարգելիչ և պաշտպանիչ մեխանիզմներն ու կարգավորումները	10
4. ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՍԲ ԲՈՒՈՒԹՅԱՆ ԴԵՊԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼՈՒՑ ՀԵՏՈ. միջազգային և ներպետական իրավակարգավորումների և դատական գործերի վերլուծություն	14
5. ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԻՄՔՈՎ ԲՈՒՈՒԹՅՈՒՆԻՑ ՏՈՒԺԱԾ ԱՆՁԱՆՑ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ	20
6. ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՍԲ ԲՈՒՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՈՒՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ	24
7. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԵՆԴԵՐԱԶԳԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ	32 38
«ԿԱՆԱՆՑ ԵՎ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ՀԱՎԱՍԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԱՎԱՍԱՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ	39
ՍԵՌԱԿԱՆ ՈՏՆՁԳՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ. առկա կանխարգելիչ և պաշտպանիչ մեխանիզմներն ու կարգավորումները	41
ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՍԲ ԲՈՒՈՒԹՅԱՆ ԴԵՊԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼՈՒՑ ՀԵՏՈ. միջազգային և ներպետական կարգավորումների և դատական ակտերի վերլուծություն	43
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԻՄՔՈՎ ԲՈՒՈՒԹՅՈՒՆԻՑ ՏՈՒԺԱԾ ԱՆՁԱՆՑ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ	44
ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՍԲ ԲՈՒՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՈՒՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ	45

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն զեկույցն ամփոփում է «Կանանց և աղջիկների համար բռնությունից զերծ կյանքի համապարփակ քաղաքականությանն ուղղված ենթադրամաշնորհային ծրագրի» շրջանակում իրականացված հետազոտությունների միջոցով վերհանված տվյալները: Ծրագիրն իրականացվում է Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիայի կողմից «ՀԱՎԱՍԱՐ - ԵՄ-ն հանուն կանանց իրավազորման Հայաստանում» ծրագրի շրջանակում Եվրոպական միության ֆինանսավորմամբ:

Ծրագրի շրջանակում իրականացվել են հետազոտություններ՝ գնահատելու կանանց իրավունքների իրավիճակը, վերլուծելու դրանց պաշտպանության իրավական մեխանիզմները, բացերն ու թերի կարգավորումները, վերհանելու իրավակիրառ պրակտիկայում առկա ռիսկերը, ինչպես նաև առաջարկելու լուծումներ դրանց հաղթահարման վերաբերյալ: Սույն զեկույցում ներկայացվել են հետազոտությունների նպատակները, հետազոտական հարցերի շրջանակը, վերհանված տվյալների հակիրճ նկարագիրը, պետական մարմիններին ուղղված առաջարկների հիմնական ուղղությունները: Չեկույցը եզրափակվել է հետազոտությունների արդյունքում արված եզրակացությունների ամփոփ նկարագրով: Վերջում ներկայացվել են յուրաքանչյուր հետազոտության արդյունքների հիման վրա արված առաջարկները՝ որպես կանանց իրավունքների պաշտպանությանն ուղղված իրավակարգավորումների, քաղաքականությունների և անհրաժեշտ միջոցառումների վերաբերյալ մեկ ընդհանուր փաթեթ:

Հետազոտական ուղղություններն ընդգրկում են հետազոտական հարցերի բազմազան շրջանակ՝ նպատակ ունենալով վերլուծելու կանանց իրավունքների պաշտպանությանն ուղղված թե՛ քրեաիրավական, թե՛ քաղաքացիաիրավական մեխանիզմները, դրանց փոփոխությունները ժամանակի ընթացքում, այդ փոփոխությունների ազդեցությունը իրավակիրառ պրակտիկայի վրա: Օրենսդրության վերլուծությունը նախ և առաջ կարևոր է իրավակարգավորումների շրջանակի համապարփակ քարտեզագրման առումով: Կարևոր է նաև վերջին տարիների օրենսդրական փոփոխությունների արդյունավետության գնահատումը իրավակիրառ պրակտիկայի վերլուծման միջոցով: Հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ պետությունը ստանձնել է պարտավորություններ՝ միանալով մարդու իրավունքների պաշտպանության մի շարք միջազգային փաստաթղթերի, վերլուծվել է նաև օրենսդրական կարգավորումների համապատասխանությունը այդ պարտավորություններին: Հետազոտությունները եզրափակված են պետական մարմիններին ուղղված առաջարկներով:

Հետազոտություններում տեղ գտած տվյալները կարող են օգտագործվել քաղաքացիական հասարակության կողմից որպես տեղեկատվական բազա՝ իրականացնելու օրենսդրական փոփոխություններին միտված ջատագովություն՝ ներկայացված առաջարկները հիմնավորելու և պետական մարմինների ներկայացուցիչների ուշադրությունը վերհանված խնդիրների և ռիսկերի վրա հրավիրելու նպատակով: Տվյալները կարող են հիմք ծառայել նաև միջազգային մեխանիզմներին կանանց իրավունքների իրավիճակի վերաբերյալ համապարփակ տեղեկություններ ներկայացնելու և պետության թերացումների վերաբերյալ իրազեկելու համար:

Մյուս կողմից՝ վերհանված տվյալներն ու դրանց վերլուծությունը կարող են կիրառվել պետական մարմինների կողմից՝ կանանց իրավունքների պաշտպանությանն ուղղված ռազմավարության մշակման, դրանից բխող գործողությունների ծրագրի արդյունավետ իրականացման նպատակով:

«ԿԱՆԱՆՑ ԵՎ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ
ՀԱՎԱՍԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ
ՀԱՎԱՍԱՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ,
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲԱՑԵՐԸ

Հետազոտության նպատակը և անհրաժեշտությունը

Սույն հետազոտությունը մանրակրկիտ ուսումնասիրության է ենթարկում «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք) կիրառման արդյունավետությունը: Օրենքը միտված է ստեղծելու գենդերային հավասարության պաշտպանության իրավական հիմք, սակայն, ըստ էության, զուրկ է արդյունավետ գործիքակազմից և ավելի քան մեկ տասնյակ տարվա ընթացքում չի կիրառվել որպես արդյունավետ իրավական պաշտպանության մեխանիզմ, հիմք չի հանդիսացել կանանց իրավունքների պաշտպանության համար:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների մասին» ՀՀ օրենքի կիրառման գործընթացը, գնահատել դրանց արդյունավետությունը, բացերը և համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորություններին կանանց և տղամարդկանց իրավահավասարության ապահովման համատեքստում: Որպես հետազոտության վերջնարդյունք ներկայացվել են առաջարկներ Օրենքի կիրառման արդյունավետության ապահովման ուղղությամբ:

Հետազոտության համար հիմք են հանդիսացել մտահոգություններն առ այն, որ Հայաստանի Հանրապետությունը թերացել է իրականացնել կանանց և տղամարդկանց իրավահավասարության ապահովմանն ուղղված միջոցառումները, ինչի մասին է ահազանգում Միավորված ազգերի կազմակերպության Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման հարցերով կոմիտեն Հայաստանում կանանց իրավունքների իրավիճակի ուսումնասիրության հիման վրա հրապարակված եզրափակիչ դիտարկումներում¹ անդրադառնալով, ի թիվս այլ հարցերի, 2013 թվականին ընդունված «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների մասին» օրենքի ոչ արդյունավետ կիրառմանը: Մտահոգության տեղիք են տալիս նաև իրավիճակի վատթարացման ցուցիչ հանդիսացող վիճակագրական տվյալները²:

Հետազոտության արդյունքները

Հետազոտության առաջին բաժնում ամփոփ ներկայացված են Հայաստանի ստանձնած միջազգային պարտավորությունները գենդերային հավասարության ապահովման համատեքստում:

Հետազոտության երկրորդ բաժնում ներկայացվում են Հայաստանում առկա օրենսդրական դաշտի համապատասխան կարգավորումները, որոնք միտված են կանանց և տղամարդկանց իրավահավասարության ապահովման մասին օրենսդրության հետ միասին ապահովելու օրենքի արդյունավետ կիրառումը:

Այս բաժնում, մասնավորապես, անդրադարձ է կատարվում 2015 թվականից ի վեր գենդերային հավասարության ապահովմանն ուղղված դրական միջոցառումներին, ինչպիսիք են.

- 2015 թվականին Հայաստանն ընդունել է «Դատավորների թեկնածուների միջև գենդերային հավասարակշռությանը նպաստելու մասին» 2015-2017 թվականների

¹ Եզրափակիչ դիտարկումներ Հայաստանի յոթերորդ պարբերական զեկույցի վերաբերյալ, Եզրափակիչ դիտարկումներ, CEDAW, Հայաստան, CEDAW/C/ARM/CO/7, 31 հոկտեմբերի, 2022 թ. https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/TBSearch.aspx?Lang=en&TreatyID=3&CountryID=8

² ՀՀ վիճակագրական կոմիտե, «Հայաստանի կանայք և տղամարդիկ-2023», 2023 թ., <https://armstat.am/?nid=80&id=2610>

գործողությունների ծրագիրը³, որով նախատեսվել են համապարփակ միջոցառումներ գեղերային հավասարության ապահովման ուղղությամբ՝ ինչպես իրավիճակի մշտադիտարկում և ուսումնասիրություն, այնպես էլ ուսումնական նյութերի պատրաստում, կրթական ծրագրերի լրամշակում և իրազեկվածության բարձրացման միջոցառումներ:

- 2016 թվականին ՀՀ ընտրական օրենսգրքում կատարվել է փոփոխություն, որով գեղերային քվոտաների շեմը 20%-ից բարձրացվել է 30%-ի՝ նպաստելու համար կանանց ավելի լայն ներգրավվածությանը քաղաքական բարձրագույն մարմնում:
- Դատական օրենսգրքում կատարվել է փոփոխություն, որով ևս նախատեսվել են գեղերային քվոտաներ դատավորների համար⁴:
- 2019 թվականին ՀՀ Կառավարությունն ընդունել է «Հայաստանի Հանրապետությունում գեղերային քաղաքականության իրականացման 2019-2023 թվականների ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը⁵», որով նախատեսվում են միջոցառումներ տարբեր ոլորտներում կանանց ներգրավվածության բարձրացման և խտրականության հաղթահարման ուղղությամբ:
- ՀՀ աշխատանքային օրենսգրքում կատարվել է լրացում, որով սահմանվել է սեռի հիմքով խտրականության, ինչպես նաև աշխատանքում սեռական բռնության ու սեռական ոտնձգության արգելքը⁶:
- 2022 թ. հուլիսից ուժի մեջ է մտել նաև քրեական նոր օրենսգիրքը, որով խտրականությունը նախատեսվել է որպես քրեորեն պատժելի արարք⁷:

Միևնույն ժամանակ, գեղերային հավասարության հիմնաքարային փաստաթուղթ հանդիսացող «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների մասին» օրենքը 11 տարիների ընթացքում մեկ անգամ է փոփոխության ենթարկվել, ինչը կասկածի տակ է դնում դրա համապատասխանությունը ներկա հարակից իրավակարգավորումներին և առկա կարիքներին:

Երրորդ բաժնում հետազոտությունը մանրակրկիտ ներկայացնում է «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների մասին» օրենքի թերի կարգավորումները, բացերը, ինչպես նաև առանձին դրույթներից բխող անհրաժեշտ միջոցառումների իրականացման ընթացքը կամ դրանց ձախողումները, որոնք, մասնավորապես, հանգեցնում են կիրառման, մշտադիտարկման, վիճակագրության թերի վարման և այլ խնդիրների:

Ինչպես Օրենքը, այս բաժինը ևս բաղկացած է վեց գլուխներից՝ համապատասխան վերտառությամբ, որտեղ, ըստ այդ գլուխներում տեղ գտած հոդվածների, ներկայացվում են վերհանված խնդիրները:

Գլուխ 1. Ընդհանուր դրույթներ. վերհանվել են հետևյալ բացերը.

- Օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներում, որոնցով սահմանվում են Օրենքի կարգավորման շրջանակը, նպատակներն ու խնդիրները, մատնանշված չեն բոլոր այն ոլորտները, որտեղ պետք է կիրառվի Օրենքը, և փաստացի այդ ոլորտներում լիարժեք կարգավորում չի նախատեսվում:

³ «Դատավորների թեկնածուների միջև սեռային (գեղերային) հավասարակշռությանը նպաստելու մասին» ՀՀ դատարանների նախագահների խորհրդի որոշում, 29 օգոստոսի 2014 թվականի N 04-Ն, <http://www.irtek.am/views/act.aspx?aid=77173>

⁴ Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրքը, 2018 թ. <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=146620#>

⁵ «Հայաստանի Հանրապետությունում գեղերային քաղաքականության իրականացման 2019-2023 թվականների ռազմավարության և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության որոշում, 19 սեպտեմբերի 2019 թվականի N 1334-Լ, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=134904>

⁶ ՀՀ աշխատանքային օրենսգիրք, 2004 թ., <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=185675>

⁷ ՀՀ քրեական օրենսգիրք, 2021 թ., <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=191266>

- Օրենքի 3-րդ և 6-րդ հոդվածները, որոնք նախատեսում են ուղղակի և անուղղակի խտրականությունը և դրանց դրսևորման ձևերը, մի կողմից՝ տալիս են խտրականության նշյալ տեսակների ոչ ճիշտ սահմանումներ, մյուս կողմից՝ չեն սահմանում խտրականության մյուս տեսակները, ինչպիսիք են վիկտիմիզացիան, սեգրեգացիան, ասոցացված խտրականությունը, բազմակի խտրականությունը⁸:
- Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ կետը սահմանում է խտրականություն չհանդիսացող տարբերակված մոտեցումը, որտեղ, հիմնվելով «Չդի և մինչև մեկ տարեկան երեխա խնամող կանանց համար ծանր և վնասակար համարվող աշխատանքների ցանկը հաստատելու մասին» Կառավարության որոշման⁹ վրա, նախատեսում է տվյալ խմբի կանանց նկատմամբ հատուկ միջոցների կիրառում, ինչը միջազգային կազմակերպությունների կողմից ճանաչվում է խտրականություն և ենթակա է վերացման¹⁰:

Միևնույն ժամանակ այլ իրավական ակտերով նախատեսված չեն դրույթներ, որոնք կապահովեն Օրենքի դրույթների իրացումը:

Օրինակ՝ Օրենքով արգելվում է գենդերային կարծրատիպերի վերարտադրությունը զանգվածային լրատվության միջոցներով, սակայն «Չանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքում¹¹ որևէ կարգավորում այս կապակցությամբ առկա չէ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասի հատուցման կարգն ու պայմանները նախատեսող 1087.1-ին հոդվածով չի սահմանվել սեռի կամ այլ հիմքով խտրականությունը՝ որպես անձի պատվին, արժանապատվությանը կամ բարի համբավին պատճառված վնաս:

Գլուխ 2. Գենդերային հավասարության ապահովման պետական քաղաքականությունը, դրա իրագործման մշտադիտարկումը և գենդերային վիճակագրությունը. վերհանվել են հետևյալ խնդիրները.

- Օրենքի 9-րդ հոդվածը նախատեսում է, որ գենդերային հավասարության ապահովման պետական քաղաքականության իրագործման մշտադիտարկումն ու գնահատումն իրականացնում են պետական մարմինները Հայաստանի Հանրապետության Կառավարության որոշմամբ սահմանված կարգով, մինչդեռ Կառավարության որոշմամբ սահմանված ստանդարտ գոյություն չունի:
- Օրենքը նախատեսում է նաև գենդերային հավասարության մեյնսթրիմինգի անհրաժեշտությունը, ինչը տեղ է գտել 2024-2028 թթ. գենդերային քաղաքականության իրականացման ռազմավարությունից բխող գործողությունների ծրագրում¹²:

⁸ Օրինակ՝ «Կանանց և տղամարդկանց իրավահավասարության մասին» Ֆինլանդիայի օրենքը (1987) արգելում է խտրականությունը մի շարք դրույթների հիման վրա՝ ներառյալ գենդերային ինքնությունը և գենդերային արտահայտությունը, հղիությունը, ծնողաբերությունը, ծնողավարությունը կամ ընտանեկան պարտականությունները: խտրականության այլ ձևերը ներառում են սեռական ոտնձգությունը, գենդերային ոտնձգությունը, խտրականության մեջ ներգրավվելու ցանկացած հրաման կամ հրահանգ կամ հակաբայելը կամ ինչ-որ մեկի հանդեպ ոչ այնքան բարենպաստ վերաբերմունք, եթե նա դիմել է իր իրավունքների պաշտպանության համար:

⁹ «Մինչև 18 տարեկան անձանց, հղի և մինչև մեկ տարեկան երեխա խնամող կանանց համար ծանր և վնասակար համարվող աշխատանքների ցանկը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության Կառավարության 29 դեկտեմբերի 2005 թվականի N 2308-Ն որոշում, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=21817>

¹⁰ Եւ, Գենդերային հավասարության ապահովումը Հայաստանում դատավորների, դատախազների և քննիչների պրակտիկայի միջոցով, ուսուցողական դասընթաց, որը պատրաստվել է ՀՀ արդարադատության ակադեմիայի հետ համատեղ, 2021 թ., <https://rm.coe.int/armenia-2022-gender-equality-course-manual-eng-final/1680a5965f>

Եզրափակիչ դիտարկումներ Հայաստանի յոթերորդ պարբերական զեկույցի վերաբերյալ, CEDAW, Հայաստան, CEDAW/C/ARM/CO/7, 31 հոկտեմբերի, 2022 թ., https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/TBSearch.aspx?Lang=en&TreatyID=3&CountryID=8

¹¹ «Չանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքը, 2003 թ., <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=164454>

¹² «Հայաստանի Հանրապետությունում գենդերային քաղաքականության իրականացման 2024-2028 թվականների ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» որոշման նախագիծը, <https://www.e-draft.am/projects/6821/about>

- Օրենքի 10-րդ հոդվածը նախատեսում է գենդերային վիճակագրության վարումը, ինչը, սակայն, գործնականում իրականացվում է ոչ ամբողջական՝ չներառելով կանանց տարբեր խմբերի վերաբերյալ վիճակագրական տվյալներ՝ վիճակագրության վարման համապարփակ մեխանիզմների բացակայության պատճառով:

Գլուխ 3. Գենդերային հավասարության երաշխիքները պետության կառավարման և հանրային ծառայության մեջ

Հաշվի առնելով այն, որ այս գլուխը վերաբերում է քաղաքացիական և քաղաքական իրավունքների իրացման հարցում գենդերային հավասարությանը՝ հարկ է նշել, որ միջազգային փորձի համաձայն՝ գենդերային հավասարությանն ուղղված օրենսդրությունը պետք է կարգավորի կանանց և տղամարդկանց իրավունքների հավասար իրացումը ոչ միայն պետության կառավարման և հանրային ծառայության ոլորտներում, այլև առնվազն աշխատանքային հարաբերություններում, ընտանեկան հարաբերություններում, սոցիալական պաշտպանության, կրթության, գիտության, առողջապահության ոլորտներում¹³: ՀՀ օրենսդրությունը կարգավորում է միայն պետական կառավարման և հանրային ծառայության ոլորտները, ինչը հանգեցնում է քաղաքացիական և քաղաքական իրավունքների իրացման համար հավասար միջավայր ապահովելու ձախողմանը՝ սահմանափակելով դրանց կիրառման շրջանակը:

Գլուխ 4. Գենդերային քաղաքականության ապահովման մեխանիզմը

4-րդ գլխում սահմանված են գենդերային ռազմավարության ապահովման մեխանիզմները, համաձայն որոնց՝ Կառավարությունը պետք է ներկայացնի և հրապարակայնացնի գենդերային հավասարության քաղաքականության կատարման ընթացքը: Այնուամենայնիվ, չկա որևէ իրավական ակտ, որը կնախատեսի հստակ կարգ և ձևաչափ, համաձայն որոնց՝ կիրականացվի արդյունքների և կատարված միջոցառումների ամփոփումը, իսկ գործնականում դա իրականացվում է չհամակարգված կերպով:

- Օրենքի 16-րդ հոդվածը նախատեսում է տեղական ինքնակառավարման մարմինների գործառույթը՝ իրենց լիազորությունների շրջանակում միջոցներ ձեռնարկելու գենդերային քաղաքականության իրագործման ուղղությամբ: Այնուամենայնիվ, կրկին որևէ այլ իրավական ակտով նախատեսված չեն տեղական ինքնակառավարման մարմինների նման գործառույթի իրականացման կարգը և անհրաժեշտ միջոցառումների ցանկը:

Գլուխ 5. Օրենքի կատարման երաշխիքները

Այս գլուխը վերաբերում է գենդերային խտրականության ենթարկված անձանց համար իրավական պաշտպանության մեխանիզմների ներդրմանը. այնուամենայնիվ, պատշաճ մեխանիզմներ դեռևս ներդրված չեն:

- Օրենքի 19-րդ հոդվածը նվիրված է գենդերային հավասարության խախտման վերաբերյալ բողոքներին և խախտման հետևանքով տուժած անձանց իրավունքների պաշտպանությանը: Ըստ վերջինիս՝ այն անձը, որը կարծում է՝ իր նկատմամբ կիրառվել է գենդերային խտրականություն, իրավունք ունի իր իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու և խախտված իրավունքներն ու ազատությունները վերականգնելու համար դիմելու իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին ու պաշտոնատար անձանց և օրենքով սահմանված ժամկետում պատասխան ստանալու:

Վարչական կարգով բողոք կարող է ներկայացվել ակտն ընդունած վարչական մարմին, վարչական մարմնի վերադաս վարչական մարմին¹⁴:

¹³ «Գենդերային հավասարության մասին» Ուկրաինայի օրենքը, 2005 թ., <http://gender.cawater-info.net/publications/pdf/ukr1.pdf>, Բոսնիա և Հերցեգովինայի օրենքը, 2003 թ. <https://www.refworld.org/legal/legislation/natlegbod/2003/en/77176>, Ուզբեկստանի օրենքը, 2019 թ. <https://lex.uz/docs/5167654>, Վրաստանի օրենքը, 2010 թ. <https://matsne.gov.ge/en/document/view/91624?publication=9>

¹⁴ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը, 2004 թ., Հոդված 70, <https://www.arlis>.

Միևնույն ժամանակ, մասնավոր անձի կողմից խտրականության դեպքերում բողոքարկման ընթացակարգերը պարզ չեն: Ակնկալվում է, որ դատավարական օրենսդրությամբ պետք է իրականացվի խտրականության դեպքերի քննության միջազգային սկզբունքներին համապատասխան ապացուցման բեռի բաշխում, այն է՝ հայցվորի կողմից խտրականության վերաբերյալ նվազագույն տեղեկությունների տրամադրում (*prima facie* - ապացուցման բեռ), իսկ պատասխանողի կողմից՝ ամբողջությամբ խտրականության բացակայության ապացուցման պարտավորություն: Այնուամենայնիվ, դեռևս քաղաքացիական դատավարության օրենսդրությունը այսպիսի ապացուցման բեռի բաշխում չի նախատեսում: Ավելին, ըստ միջազգային ստանդարտների, որոշ երկրներ խտրականության գործերով սահմանում են անձի՝ պետական տուրքից ազատվելու հնարավորությունը դատական պաշտպանությանը դիմելու պարագայում¹⁵: Բացի այդ՝ խտրականության դեպքերով նաև կարևոր է հասարակական կազմակերպությունների՝ դատարան դիմելու իրավունքը հանրային շահի պաշտպանության գործերով (*actio popularis*), քանի որ շատ հաճախ խտրական որոշումներ, գործողությունների օրենսդրության կամ քաղաքականության զոհ են դառնում անձինք, որոնք չունեն իրազեկվածություն կամ հասանելիություն իրավական պաշտպանության միջոցներին, ինչը զրկում է նրանց արդար դատաքննության և արդյունավետ իրավական պաշտպանության իրավունքից: ՀՀ օրենսդրությամբ հասարակական կազմակերպություններին նման իրավունք է վերապահված միայն շրջակա միջավայրի պաշտպանության գործերով, ինչը կրկին սահմանափակում է մարդու իրավունքների ապահովման գործիքակազմը:

Գլուխ 6. Գենդերային հավասարության ապահովման պետական քաղաքականության իրագործման ֆինանսավորումը

Գենդերային հավասարության մասին օրենքի 6-րդ գլուխը իր միակ՝ 20-րդ հոդվածով, վերաբերում է գենդերային հավասարության ապահովման պետական քաղաքականության իրագործման ֆինանսավորմանը՝ սահմանելով որպես քաղաքականության հիմնական աղբյուր պետական բյուջեն և հավելելով, որ ֆինանսավորում կարող է իրականացվել օրենքով չարգելված այլ միջոցներով, ինչպիսիք են, օրինակ, միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների հատկացումները:

Այս առումով, թեև Օրենքից բխող այն դրույթը, որը գենդերային հավասարության ապահովումն իրականացնում է պետական բյուջեի միջոցներով՝ որպես հիմնական աղբյուրի, հստակ արտացոլված չէ վերաբերելի փաստաթղթերում, այդ թվում՝ տարեկան բյուջեներում և ՄԺԾԾ-երում, սակայն այն 20-րդ հոդվածի երկրորդ մասի տեսանկյունից պրակտիկայում հստակ իրագործվում է:

Օրենքի, հարակից օրենսդրության թերի կարգավորումների, իրավական պրակտիկայի խնդիրների և բացերի վերլուծության հիման վրա հետազոտության վերջին բաժնում ներկայացված են առաջարկներ՝ կապված խտրականության՝ ներառյալ գենդերային բռնության համապարփակ կարգավորման, հետազոտության ուսումնասիրության առարկա հանդիսացող Օրենքի փոփոխությունների, հարակից օրենսդրության փոփոխությունների հետ, ինչպիսիք են «Չանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքը, «Վարչական իրավախախտումների մասին» ՀՀ օրենքը, ինչպես նաև քաղաքականության փոփոխությունների և այլ անհրաժեշտ միջոցառումների հետ:

ՍԵՌԱԿԱՆ ՈՏՆՁԳՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ
ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱԿՈՒԹՅՈՒՆ. առկա
կանխարգելիչ և պաշտպանիչ
մեխանիզմներն ու կարգավորումները

Հետազոտության նպատակը և անհրաժեշտությունը

Սույն հետազոտությունը առանձնահատուկ ուսումնասիրության առարկա է դարձնում սեռական ոտնձգության բոլոր տեսակների կարգավորման շրջանակը՝ դուրս գալով քրեաիրավական կարգավորման դաշտից և դիտարկելով առավել խոցելի հարաբերություններում կանանց նկատմամբ սեռական ոտնձգության կանխարգելմանն ուղղված կարգավորումների առկայությունը, դրանց թերություններն ու բացերը: Հետազոտության արդյունքների հիման վրա ներկայացված առաջարկները կարող են հիմք դառնալ հատկապես աշխատանքային հարաբերություններում կանանց պաշտպանվածության մեխանիզմների ձևավորման համար՝ կանանց շահագործումից խուսափելու նպատակով:

Սույն ուսումնասիրության նպատակն է վերհանել սեռական ոտնձգության կանխարգելմանը և պատասխանատվությանը ուղղված Հայաստանի Հանրապետության ներպետական օրենսդրական կարգավորումների շրջանակը, բացերը, ինչպես նաև պետության ստանձնած միջազգային պարտավորություններից բխող փոփոխությունների կամ լրացումների անհրաժեշտությունը:

Ուսումնասիրության անհրաժեշտությունը պայմանավորված է, մի կողմից, այն հանգամանքով, որ Հայաստանի Հանրապետությունը ստորագրել և պատրաստվում է վավերացնել «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիան¹⁶ (Ստամբուլյան կոնվենցիա), ինչը ենթադրում է ներպետական օրենսդրության համապատասխանեցում նաև կանանց նկատմամբ սեռական ոտնձգությունների դեմ իրավակարգավորումների պահանջներին, բացի այդ՝ պետությունը պետք է կանանց իրավունքների պաշտպանության մեխանիզմները համապատասխանեցնի «Կանանց դեմ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ՄԱԿ-ի կոնվենցիային, որի նկատմամբ վերահսկողության շրջանակում համանուն կոմիտեն իր 7-րդ պարբերական զեկույցում նոր առաջարկներ է ներկայացրել¹⁷: Մյուս կողմից՝ սեռական ոտնձգության դեմ պայքարի արդյունավետությունն ապահովելու համար առաջնային է ուսումնասիրել ոչ միայն օրենսդրական կարգավորումների առկայությունը, այլև իրավական պաշտպանության մեխանիզմների կիրառման նկատմամբ վերահսկողության մեխանիզմները՝ հաշվի առնելով տուժողների խոցելիությունը:

Ուսումնասիրության վերջում ներկայացվել են թե՛ աշխատանքային, թե՛ այլ ոլորտներում վերահսկողական մեխանիզմներ նախատեսող իրավական ակտերում լրացումներ և փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկներ՝ հիմնված օրենսդրական դաշտի և միջազգային պարտավորությունների համադրման վրա:

Ուսումնասիրության առաջին մասում ներկայացված են ՀՀ-ի ստանձնած միջազգային պարտավորությունները:

Նախ և առաջ հղում է արված Ստամբուլյան կոնվենցիայի 40-րդ հոդվածին, համաձայն որի՝ մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու, որ սեռական բնույթի խոսքային, ոչ խոսքային կամ ֆիզիկական գործողությամբ դրսևորվող ցանկացած վարքագիծ, որը նպատակ ունի խոցելու անձի արժանապատվությունը կամ հանգեցնում է դրան, մասնավորապես՝ ճնշող, թշնամական, նվաստացուցիչ, նվաստացնող կամ վիրավորական մթնոլորտ ստեղծելը, պատժելի լինի քրեական կամ որևէ այլ պատժամիջոցի ներքո:

¹⁶ «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիան, <https://rm.coe.int/168046246d>

¹⁷ Եզրափակիչ դիտարկումներ Հայաստանի յոթերորդ պարբերական զեկույցի վերաբերյալ, Եզրափակիչ դիտարկումներ, CEDAW, Հայաստան, CEDAW/C/ARM/CO/7, 31 հոկտեմբերի, 2022 թ., https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/TBSearch.aspx?Lang=en&TreatyID=3&CountryID=8

Անդրադարձ է կատարվում նաև ՀՀ-ի կողմից վավերացված «Սեռական շահագործումից և սեռական բռնությունից երեխաներին պաշտպանելու մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիային (Լանցարոտեի կոնվենցիա), համաձայն որի՝ պետք է քրեականացվեն դիտավորությամբ կատարված այնպիսի արարքներ, ինչպիսիք են՝ երեխայի նկատմամբ սեռական բնույթի բռնությունը, մանկական մարմնավաճառությունը, մանկական պոռնոգրաֆիան, երեխայի մասնակցությունը պոռնոգրաֆիկ ցուցադրություններում, երեխային սեռական բնույթի գործողությունների դրդումը, երեխայի սեռական այլասերումը և այլն:

Հատուկ շեշտադրված են նաև աշխատանքային միջավայրում սեռական ոտնձգությունների հասցեագրման առկա իրավիճակը և անհրաժեշտ միջոցառումները: Այս ոլորտում կարևոր առաջարկներ են ներկայացվել թե՛ ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության հարցերով կոմիտեի կողմից ուղղակիորեն, թե՛ «Աշխատանքում բռնության և ոտնձգության մասին» ԱՄԿ-ի կոնվենցիայի շրջանակում, որը ՀՀ-ի կողմից դեռևս չի վավերացվել, սակայն պարունակում է հստակ միջոցառումների ցանկ, որոնք անհրաժեշտ է ներդնել աշխատանքային հարաբերություններում սեռական ոտնձգությունը կանխելու կամ դրա համար պատասխանատվության ենթարկելու առումով:

Հարկ է նշել, որ ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության հարցերով կոմիտեին ներկայացված յոթերորդ պարբերական զեկույցում Հայաստանը նշել է, որ **աշխատավայրում սեռական ոտնձգությունների վերաբերյալ բողոքներ ներկայացնելու համար խորհրդապահական և ապահով համակարգ ստեղծելու կապակցությամբ որևէ օրինագիծ մշակված չէ**¹⁸:

Ուսումնասիրության երկրորդ մասում ներկայացված են ՀՀ ներպետական իրավակարգավորումները:

Խտրականության արգելքի վերաբերյալ դրույթներ են նախատեսված և՛ Սահմանադրությամբ, և՛ աշխատանքային օրենսգրքով: Վերջինիս նախատեսում է նաև ցանկացած ձևով հարկադիր աշխատանքի, սեռական և այլ բռնության արգելքը:

2023 թվականի լրացումներով սահմանվել են նաև «աշխատավայրում բռնությունը» և «սեռական ոտնձգությունը» եզրույթները: Այս առումով կարևոր է նախ «Իրավահավասարության ապահովման մասին» օրենքի¹⁹ ընդունումը, որով սահմանվում է ոտնձգությունը՝ որպես խտրականության տեսակ, և նախատեսում է հավասարության մարմնի ստեղծում մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի կազմում՝ խտրականության դեպքերի վերաբերյալ տվյալների հավաքման, մշտադիտարկման, ինչպես նաև նման դեպքերում դատարան դիմելու լիազորություններով:

Կրթական հաստատություններում սեռական ոտնձգությունների հասցեագրման, ինչպես նաև կանխարգելման կամ վերահսկողության մեխանիզմներ ևս նախատեսված չեն: «Կրթության մասին» ՀՀ օրենքը որևէ կերպ հարցին չի անդրադառնում, իսկ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքը նախատեսում է այնպիսի արարքների արգելք, որոնք կարող են կրթության իրավունքի խախտման հանգեցնել:

Հարկ է նշել, որ բարձրագույն ուսումնական հաստատությունները այս հարցը փորձել են կարգավորել՝ որպես ներքին իրավական ակտ նախատեսելով սեռական ոտնձգության բացառման քաղաքականություններ, սակայն ոչ բոլոր բուհերն ունեն նման ներքին կանոնակարգեր, իսկ դպրոցներում նման փաստաթղթերն իսպառ բացակայում են:

¹⁸ Հայաստանի յոթերորդ պարբերական զեկույց, CEDAW/C/ARM/7, 16 դեկտեմբերի 2020 թ., tbinetinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CEDAW%2F%2FARM%2F7&Lang=en

¹⁹ «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքը, Աժ, 10.09.2019, ՀՕ-173-Ն, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=134793>

Ուսումնասիրության երրորդ գլխում ներկայացված են պատասխանատվության և կանխարգելման մեխանիզմները:

Այս բաժնում անդրադարձ է կատարվում քրեաիրավական և վարչաիրավական կարգավորումներին, որոնք ոչ ամբողջությամբ, բայց որոշ մասով նախատեսում են սեռական ոտնձգություններից պաշտպանության մեխանիզմներ:

2021 թվականին ընդունված ՀՀ քրեական օրենսգիրքը²⁰ նախատեսում է սեռական ազատության և սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված մի շարք հանցագործություններ, ինչպիսիք են սեքսուալ բնույթի գործողություններ կատարելը 16 տարին չլրացած անձի նկատմամբ, անառակաբարո արարք կատարելը, 16 տարին չլրացած անձին սեռական հարաբերություն կամ սեքսուալ բնույթի այլ գործողություններ կամ մանկական պոռնոգրաֆիա ստեղծել կամ արտադրել առաջարկել և այլն, այնուամենայնիվ, դրանք որպես այդպիսին, չեն ծառայում սեռական ոտնձգության համար կանխարգելման և պատասխանատվության ենթարկելու բուն նպատակին, քանի որ վերաբերում են սեռական բնույթի ընդհանուր հանցագործություններին կամ հատուկ ուշադրություն են սևեռում անչափահասների վրա:

Քրեական Նոր օրենսգրքով քրեական պատասխանատվություն է նախատեսվել նաև խտրականության համար, ինչը կիրառելի է բոլոր ոլորտներում դրսևորված խտրականության դեպքերի նկատմամբ:

Համաձայն աշխատանքային օրենսգրքի՝ հայցային վաղեմություն չի կիրառվում աշխատողի պատվի և արժանապատվության պաշտպանության, աշխատավարձի, ինչպես նաև աշխատողի կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման պահանջներով²¹: Աշխատանքային օրենսդրությունը, սակայն, սահմանափակվում է «սեռական ոտնձգության» սահմանմամբ և չի նախատեսում դրանից պաշտպանության արդյունավետ գործիքակազմ:

Այսպիսով՝ թե՛ աշխատանքային օրենսդրությունը, թե՛ կրթության ոլորտը կարգավորող օրենսդրությունը չեն ներառում բավարար և արդյունավետ իրավական պաշտպանության մեխանիզմներ սեռական բռնության դեպքերի կանխարգելման և պաշտպանության համար: Միևնույն ժամանակ, չեն իրականացվում նաև իրազեկվածության բարձրացմանն ուղղված միջոցառումներ՝ մի կողմից սեռական բռնության դեպքերը կանխելու, մյուս կողմից նման դեպքերի պարագայում տուժողների կողմից հաղորդումների ներկայացման և իրավական պաշտպանության մեխանիզմների վերաբերյալ տեղեկացվածությունը բարձրացնելու նպատակով:

Հետազոտության վերջին բաժնում Օրենքի, հարակից օրենսդրության թերի կարգավորումների, իրավական պրակտիկայի խնդիրների և բացերի վերլուծության հիման վրա ներկայացված առաջարկները վերաբերում են աշխատանքային հարաբերություններում սեռական ոտնձգության բացառմանն ուղղված կարգավորումներին, սեռական ոտնձգության դեպքերի պարագայում իրավական պաշտպանության դիմելու Նոր մեխանիզմների և դատաիրավական կարգավորումների առանձնահատկություններին, գենդերային քաղաքականությանը, տուժողների մասնավոր կյանքին վերաբերող տվյալների պաշտպանությանը և այլ անհրաժեշտ միջոցառումներին:

²⁰ ՀՀ քրեական օրենսգիրք, ՀՕ-199-Ն, ընդունված 2021 թվականի մայիսի 5-ին, Գլուխ 27, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=191266>

²¹ ՀՀ աշխատանքային օրենսգիրք, Հոդված 30, մաս 3:

ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՈՆՈՒԹՅԱՆ
ԴԵՊԵՐՏԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ
ՔՐԵԱԿԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ
ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼՈՒՑ ՀԵՏՈ.
միջազգային և ներպետական
իրավակարգավորումների և
դատական գործերի վերլուծություն

Հետազոտության նպատակը և անհրաժեշտությունը

Սույն հետազոտությունը ուսումնասիրության առարկա է դարձնում քրեական նոր օրենսգրքի՝ կանանց իրավունքների պաշտպանության համար էական դեր ունեցող հոդվածների կիրառումը գործնականում՝ նպատակ ունենալով բացահայտելու դրանց արդյունավետությունը բռնության տարբեր ձևերի պարագայում: Մյուս կողմից՝ հետազոտությունը հասցեագրում է իրավիճակի վերահսկման պետական և հասարակական մեխանիզմները՝ հասկանալու համար, թե որքանով են պետական մարմինները և հասարակական կազմակերպությունները ունակ դիտարկելու կանանց նկատմամբ բռնության ընթացիկ իրավիճակը, իրավական պաշտպանության մեխանիզմների կիրառման փորձը, դրա արդյունավետությունը, դեպքերի քննությունը նախաքննության և դատաքննության ընթացքում, նշանակվող պատժատեսակների համաչափությունը, դատարանների մոտեցումներում խտրականության արտահայտումը, ինչպես նաև ընտանեկան բռնության դեմ օրենքով նախատեսված մեխանիզմների կիրառումն ու դրա երաշխիք հանդիսացող քրեաիրավական կարգավորումների գործողությունը:

Սույն ուսումնասիրության նպատակն է՝ վերլուծել գենդերային հիմքով բռնության դեպքերով ՀՀ նորմատիվ իրավական ակտերի կիրառման պրակտիկան՝ պարզելու կանանց համար արդարադատության մատչելիությունը, մասնավորապես՝ նոր իրավակարգավորումների ազդեցությունը իրավակիրառ պրակտիկայի վրա:

Այսպիսով՝ ուսումնասիրվել է 2022 թվականի հուլիսին ուժի մեջ մտած քրեական նոր օրենսգրքի համապատասխան դրույթների կիրառությունը ֆիզիկական, հոգեբանական, սեռական և տնտեսական բռնությունների դեպքերում: Չեկույցի առաջին մասում առանձին-առանձին վերլուծված են բռնության այս չորս տեսակները, դրանց հիմնական դրսևորումներն ու կարգավորումների լավագույն փորձը: Այնուհետև վերլուծվել են քրեական նոր օրենսգրքի այն դրույթները, որոնք կիրառելի են գենդերային բռնության դեպքերում, ապա՝ գնահատվել գենդերային բռնության կանխարգելման ազգային գործողությունները:

Կանանց համար արդարադատության մատչելիությունը վերլուծելու և նոր իրավանորմերի արդյունավետությունը գնահատելու նպատակով հարցումներ են ուղարկվել բոլոր իրավակիրառ մարմիններին՝ նախ և առաջ պարզելու կանանց նկատմամբ բռնության դեպքերի վերաբերյալ դիմումների քանակը, դրանց քննության ընթացքը, դատաքննության փուլ հասնելու միտումները:

Հետազոտության արդյունքները

ՀՀ քրեական նոր օրենսգիրքը նախատեսում է նախկինում առկա հոդվածների փոփոխություններ կամ նոր հանցակազմերի ներառում, որոնք միտված են ընդլայնելու քրեորեն պատժելի արարքների շրջանակը կամ որոշակիացնելու արարքների համար նախատեսված քրեական պատասխանատվությունը: Այսպես՝ քրեական նոր օրենսգրքի 71-րդ հոդվածը, որը քրեական նախկին օրենսգրքի 63-րդ հոդվածի լրացված տարբերակն է, արարքի համար նախատեսված պատասխանատվության և պատժի համար ծանրացնող հանգամանք է դիտարկում դրա՝ մերձավոր ազգականի նկատմամբ կատարված լինելը:

Ծանրացնող հանգամանքների շարքում հաջորդ լրացումը վերաբերում է ատելության և թշնամանքի շարժառիթով կատարված արարքներին: Մասնավորապես, քրեական նոր օրենսգրքի 71-րդ հոդվածով նախատեսված դրույթը ձևակերպված է հետևյալ կերպ. «*հանցանքը ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, սեռով, քաղաքական կամ այլ հայացքներով կամ անձնական կամ սոցիալական բնույթի*

այլ հանգամանքներով պայմանավորված ատելության, անհանդուրժողականության կամ թշնամանքի շարժառիթով կատարելը...»: Չնայած նրան, որ այս ձևակերպումը ամբողջ ծավալով չի սահմանում այն բոլոր հատկանիշները, որոնցով կարող են պայմանավորված լինել ատելությունն ու թշնամանքը՝ այնուամենայնիվ, ի տարբերություն նախկին օրենսգրքի, որը նախատեսում էր միայն ռասան, կրոնը և էթնիկ ծագումը որպես ատելության շարժառիթով կատարված հանցագործություններից պաշտպանված հատկանիշեր, սահմանում է ոչ սպառնիչ ցանկ և կարող է մեկնաբանվել իրավունքի զարգացման պրակտիկային համապատասխան: Մասնավորապես, գենդերը և սեռը նույնպես անձի անձնական հատկանիշեր են, որոնք հաճախ կարող են ինքնին՝ առանց որևէ այլ պատճառի, լինել բռնարարի արարքի հիմքն ու շարժառիթը:

«Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի 2024 թվականին ընդունված փոփոխությունների համաձայն՝ ընտանիքում բռնություն է համարվում ոչ միայն մերձավոր ազգականների՝ ներառյալ ամուսինների, այլև զուգընկերոջ կողմից բռնությունը, որտեղ «զուգընկեր» հասկացությունը սահմանվում է հետևյալ կերպ. «զուգընկեր՝ անձ, որի հետ առկա են հարաբերություններ, որոնց հատուկ է սիրային կապը՝ անկախ համատեղ բնակության կամ միմյանց հետ սեռական հարաբերություններ ունենալու հանգամանքից»: Այսինքն՝ կարելի է եզրակացնել, որ չնայած նրան, որ ընտանեկան բռնության վերաբերյալ օրենսգիրքը ընտանեկան բռնություն է ճանաչում զուգընկերոջ կողմից կատարված բռնությունը, որը կարող է լինել ոչ միայն գրանցված կամ քաղաքացիական ամուսնության մեջ գտնվող, այլ նաև պարզապես զուգընկերային հարաբերության մեջ գտնվող, բայց համատեղ կենցաղ չկիսող և սեռական հարաբերությունների մեջ չգտնվող անձը, ինչպես նաև նույնասեռական հարաբերությունների մեջ գտնվող անձը, քրեական օրենսգիրքը արարքի համար ծանրացնող հանգամանք նախատեսում է ընտանեկան բռնության սուբյեկտների սահմանափակ շրջանակի համար:

Այսինքն՝ քրեական նոր օրենսգիրքը կանանց նկատմամբ բռնությունից և հատկապես առավել տարածված՝ ընտանեկան բռնությունից պաշտպանության մեխանիզմների առումով գրանցել է առաջընթաց՝ նախատեսելով նախ և առաջ մերձավոր ազգականների կողմից ֆիզիկական, հոգեբանական ամբողջականության, անձնական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունների, ինչպես նաև ներկա կամ նախկին զուգընկերոջ կողմից սեռական բռնության համար առավել խիստ պատասխանատվություն: Բացի այդ՝ որոշ հանցակազմերում ևս պատժաչափերը խստացվել են: Միևնույն ժամանակ, օրենսդրական կարգավորումները անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման են՝ ապահովելու կանանց պաշտպանությունը բռնությունից: Եթե պետությունը որդեգրել է քաղաքականություն՝ քրեական օրենսդրությամբ չառանձնացնելու ընտանեկան բռնության, ինչպես նաև գենդերային բռնության վերաբերյալ կարգավորումները և դրանք հասցեագրելու ընդհանուր կարգավորումներին զուգընթաց՝ ծանրացնող հանգամանքների միջոցով, ապա դրանց արդյունավետ կիրառումն ապահովելու նպատակով պետք է նախատեսի նաև ռազմավարական փաստաթղթի և գործողությունների ծրագրի առկայությունը, որը ոչ միայն կծառայի գործադիր իշխանության մարմիններին՝ որպես ուղորտում իրենց գործառնություններից բխող միջոցառումների ծրագիր, այլև կուղղորդի իրավակիրառ մարմիններին Օրենքի կարգավորումների մեկնաբանման և կիրառման ընթացքում որպես ուղեցույց և որպես օրենսդրական կարգավորումների նպատակային շղթայի մաս:

Համաձայն ՀՀ ՆԳՆ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնում գրանցված կին տուժողների նկատմամբ գրանցված հանցագործությունների վերաբերյալ վիճակագրական տվյալների՝

- 2022 թվականի հուլիսի 1-ի դրությամբ գրանցվել է 1271 դեպք, որից 43-ը՝ ընտանեկան

բռնության վերաբերյալ, իսկ

- 2023 թվականին՝ 2844 դեպք, որից 325-ը՝ ընտանեկան բռնության վերաբերյալ:

Այնուամենայնիվ, տվյալների հավաքման համակարգի և վիճակագրական տվյալների բացակայության հետևանքով հնարավոր չի եղել իրավակիրառ մարմիններից ստանալ տվյալներ գենդերային բռնության առանձին տեսակների ու դեպքերի դատավարական ընթացքի վերաբերյալ: Ավելին՝ ՀՀ ՆԳՆ-ն հայտնել է, որ հանցագործություններից տուժած անձանց սեռական կողմնորոշման, հաշմանդամության կամ առողջության խնդիրների վերաբերյալ ինֆորմացիոն կենտրոնում հաշվառում չի իրականացվում:

Այնուհետև ուսումնասիրվել է դատական պրակտիկան՝ հանրությանը հասանելի «Դատալեքս.ԷյԷմ» կայքի միջոցով, որի արդյունքում ստացվել է հետևյալ պատկերը.

- **Ֆիզիկական ներգործության դեպքերից առկա է 191 գործ, որոնցից 142-ում տուժողը կին է,**
- **հոգեկան ներգործության դեպքերից առկա է 25 գործ, որոնցից 21-ում է տուժողը կին:**

Սակայն սեռական բռնության դեպքերով միայն մեկ գործ է հասանելի, իսկ տնտեսական բռնության դեպքով որևէ գործ հասանելի չի եղել:

Նշյալ գործերից մանրակրկիտ ուսումնասիրության է ենթարկվել 22 գործ՝ հասկանալու համար, թե *խափանման ինչ միջոցներ են կիրառվում իրավախախտների նկատմամբ, արդյոք արարքի քրեաիրավական որակումը տալիս հաշվի առնվում են ծանրացնող կամ մեղմացնող հանգամանքներ, և որոնք են դրանք, արդյոք արարքները մեկանգամյա, թե բազմակի դրսևորումներ ունեն, արդյոք դատարանները կիրառում են մարդու իրավունքների միջազգային աստյանների մեկնաբանությունները, արդյոք վճիռները գերծ են խտրական գնահատականներից, որքան է տևում դեպքերի քննությունը, ինչպիսի պատիժներ են նշանակվում և այլն:*

Ընդ որում՝ 22 դատական գործերից 15-ում արձանագրվել են **ֆիզիկական, 16-ում՝ հոգեբանական բռնության դեպքեր, իսկ 1-ում՝ սեռական բռնության դեպք:** 22 դատական գործերից.

- **10-ը միաժամանակ ֆիզիկական և հոգեբանական բռնության դեպքեր են:** Դրանցից 8-ի դեպքում հանցավոր արարքը որակվել է ՀՀ քրեական օրենսգրքի 194-րդ և 195-րդ հոդվածների հատկանիշերով (հոգեկան ներգործությունը և ֆիզիկական ներգործությունը): 10-ից 1-ի դեպքում հանցավոր արարքը որակվել է ՀՀ քրեական օրենսգրքի 194-րդ, 195-րդ և 196-րդ հոդվածներով նախատեսված հատկանիշերով (հոգեկան ներգործությունը, ֆիզիկական ներգործությունը և ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը): Իսկ մյուսի դեպքում հանցավոր արարքը որակվել է ՀՀ քրեական օրենսգրքի 171-րդ, 194-րդ և 195-րդ հոդվածներով (առողջությանը թեթև վնաս պատճառելը, հոգեկան ներգործությունը և ֆիզիկական ներգործությունը):
- **5-ը միայն ֆիզիկական բռնության դեպքեր են,** այդ թվում՝ 4-ի դեպքում հանցավոր արարքը որակվել է ՀՀ քրեական օրենսգրքի 195-րդ հոդվածի հատկանիշերով (ֆիզիկական ներգործությունը), իսկ 1-ի դեպքում՝ ՀՀ քրեական օրենսգրքի 171-րդ հոդվածի հատկանիշերով (առողջությանը թեթև վնաս պատճառելը):
- **6-ը միայն հոգեբանական բռնության դեպքեր են,** որտեղ հանցավոր արարքը որակվել է ՀՀ քրեական օրենսգրքի 194-րդ հոդվածի հատկանիշերով (հոգեկան ներգործությունը):
- **1-ը միայն սեռական բռնության դեպք է,** որտեղ հանցավոր արարքը որակվել է ՀՀ քրեական օրենսգրքի 198-րդ հոդվածով նախատեսված հատկանիշերով (սեքսուալ բնույթի բռնի գործողություններ կատարելը):

Ուսումնասիրված 22 դատական գործերից միայն 9-ի դեպքում է կայացվել վերջնական դատական ակտ (դատավճիռ), որից 8-ի դեպքում նշանակվել է միայն կամ ներառյալ ազատազրկման ձևով պատիժը, այդ թվում՝

- **1-ի դեպքում** նշանակվել է **տուգանք** 200,000 ՀՀ դրամի չափով,
- **1-ի դեպքում** նշանակվել են 1 ամիս 15 օր ժամկետով **ազատազրկում և տուգանք՝** 340,000 ՀՀ դրամի չափով,
- **2-ի դեպքում** նշանակվել է 1 ամիս ժամկետով **ազատազրկում,**
- **2-ի դեպքում** նշանակվել է 2 ամիս ժամկետով **ազատազրկում,**
- **1-ի դեպքում** նշանակվել է 6 ամիս ժամկետով **ազատազրկում,**
- **1-ի դեպքում** նշանակվել է 1 տարի 6 ամիս ժամկետով **ազատազրկում,**
- **1-ի դեպքում** նշանակվել է 3 տարի 3 ամիս ժամկետով **ազատազրկում:**

Ընդ որում՝ վերջնական դատական ակտ (դատավճիռ) կայացրած.

- **Վերոգրյալ 9-ից 3-ի դեպքում ազատազրկման ձևով պատիժը պայմանականորեն չի կիրառվել,** որտեղ 2-ի դեպքում կիրառվել է տուգանքը, այդ թվում՝ դրանցից մեկի դեպքում ֆիզիկական և հոգեկան ներգործությունը հաշվի չի առնվել՝ չնայած այն հանգամանքին, որ մեղադրական եզրակացության մեջ դրանք հաշվի առնված եղել են, սակայն դատարանը հաշվի է առել միայն կարևոր փաստաթղթեր հափշտակելու հանգամանքը, իսկ երրորդ դեպքով սահմանվել են երկու տարի փորձաշրջան և առանց համաձայնության երկրի տարածքը լքելու արգելքը:
- **Վերոգրյալ 9-ից 7-ի դեպքում հանցավոր արարքը կատարվել է որպես «մերձավոր ազգականի» կողմից կատարված, այսինքն՝ որպես ծանրացնող հանգամանք է հաշվի առնվել պատժաչափը որոշելիս:** Իսկ 2-ի դեպքում դատական ակտի բովանդակությունում ներկայացված է որպես «կնոջ» կամ «նախկին ընկերուհու» նկատմամբ կատարված արարք, ինչի դեպքում, սակայն, արարքը պետք է դիտարկել որպես գենդերային հիմքով բռնություն (մասնավորապես, վերջին դեպքով՝ բռնարարը, ակնհայտ իշխանություն դրսևորելով, պարբերաբար մտել է տուժողի՝ նախկին ընկերուհու բնակարան և նրա նկատմամբ հոգեկան ներգործություն կիրառելու դիտավորությամբ սպառնացել սպանել, ինչպես նաև կատարել բռնի գործողություններ): Մյուս դատական գործերով որպես ծանրացնող հանգամանք են դիտարկվել, օրինակ, նաև մոր և քրոջ կամ նախկին կնոջ նկատմամբ կատարված բռնությունները:
- **Վերոգրյալ 9-ից 2-ի դեպքում են մեղմացնող հանգամանքներ հաշվի առնվել պատժաչափը որոշելիս,** մասնավորապես՝ 1-ի դեպքում այդպիսիք են համարվել իրեն մեղավոր ճանաչելը, կատարածի համար զոջալը և երեք անչափահաս երեխաներ ունենալը, իսկ մյուսի դեպքում՝ երեք անչափահաս երեխաներ ունենալը:

Տվյալ հոդվածով կամ հոդվածներով սահմանված պատժաչափերից, ըստ խստության, վերոգրյալ 9-ից 7-ի դեպքում ընտրվել է մեղմ պատժաչափ, իսկ 2-ի դեպքում՝ միջին պատժաչափ:

- **Վերոգրյալ 9-ից 5-ի դեպքում ֆիզիկական և հոգեբանական բռնության զուգորդված դեպքեր են** (ՀՀ քրեական օրենսգրքի 195-րդ և 194-րդ հոդվածներ), **2-ի դեպքում ֆիզիկական բռնության դեպքեր են** (ՀՀ քրեական օրենսգրքի 195-րդ հոդված), **2-ը հոգեբանական բռնության դեպքեր են** (ՀՀ քրեական օրենսգրքի 194-րդ հոդված) :
- **Վերոգրյալ 9-ից 8-ի դեպքում խափանման միջոցն ընտրվել է ազատազրկման հետ չկապված՝ բացակայելու արգելքը, իսկ 1-ով՝ կալանքը:**
- **Վերոգրյալ 9-ից 6-ի դեպքում քրեական վարույթի տևողությունը** (հետազոտության պահին) **մինչև 1 տարի է, 2-ի դեպքում՝ 1,5-ից մինչև 2 տարի, իսկ 1-ի դեպքում՝ 1-ից մինչև**

1,5 տարի:

- Վերոգրյալ 9-ից 7-ի դեպքում հանցագործության որակումը եղել է միայն բռնության 1 դրվագի վերաբերյալ, իսկ 2-ի դեպքում ընտանեկան բռնության նախկին դրվագների առկայությունը, պարբերական բնույթը ազդեցություն ունեցել են հանցագործության որակման կամ պատժաչափի վրա:
- Բոլոր 22 դատական գործերից, այդ թվում՝ վերջնական դատական ակտ կայացրած 9 դատական գործերից միայն 1 դատական ակտի բովանդակությունում է նկատելի, որ անմիջականորեն կիրառվել են միջազգային իրավունքի համապատասխան նորմերը կամ չափանիշերը՝ հիմնվելով Սահմանադրության 81-րդ հոդվածի վրա (օրինակ՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը):
- Ուսումնասիրված բոլոր 22 դատական գործերը եղել են հանրային մեղադրանքի գործեր:
- Ուսումնասիրված 22 դատական գործերից որևիցե մեկում, այդ թվում՝ 9 դատական գործերով կայացրած վերջնական դատական ակտերում, խտրական դրսևորումներն արտացոլված չեն եղել:
- 22 դատական գործերի ուսումնասիրությամբ չի պարզվել, այդ թվում՝ 9 դատական գործերով կայացված վերջնական դատական ակտերում արտացոլված չեն եղել, թե հարուցված քրեական գործերի հիման վրա տուժողը բռնության հետևանքով կրած ծախսերի (օրինակ՝ առողջապահական ծառայություններից օգտվելու մասով) փոխհատուցում ստացել է, թե ոչ:
- 22 դատական գործերից 2-ի դեպքում հանցավոր արարքը որակվել է նաև ՀՀ քրեական օրենսգրքի 508-րդ հոդվածով նախատեսված հատկանիշերով, այն է՝ անհետաձգելի միջամտության որոշումը կամ պաշտպանական որոշումը չկատարելը:
- Աղյուսակ 1-ում նկատելի է, որ քրեական վարույթներից կեսի (ուսումնասիրված 22 դատական գործերից 11-ի դեպքում) տևողությունը մինչև 1 տարի է, 6-ի դեպքում՝ 1-ից մինչև 1,5 տարի, իսկ մնացած 5-ի դեպքում՝ 1,5-ից 2 տարի:

Քրեական վարույթի տևողությունը՝ ըստ ՀՀ քրեական օրենսգրքի հոդվածներով հարուցված գործերի	ՀՀ ԶՕ հ. 195	ՀՀ ԶՕ հ. 194, հ. 195	ՀՀ ԶՕ հ. 194, հ. 195, հ. 196	ՀՀ ԶՕ հ. 194	ՀՀ ԶՕ հ. 198	ՀՀ ԶՕ հ. 171
Մինչև 1 տարի	2	4		3	1	1
1 - 1,5 տարի	2	2		2		
1,5 - 2 տարի		3	1	1		

Հաշվի առնելով վերլուծության արդյունքները՝ ներկայացվել են առաջարկներ հետևյալ ուղղություններով.

1. Կանանց նկատմամբ բռնության դեպքերի վերաբերյալ տվյալների հավաքում և վիճակագրության վարում:
2. Իրավակիրառ մարմինների կարողությունների զարգացում:
3. Հասարակական կազմակերպությունների և պետական կառույցների համագործակցության բարելավում:
4. Դատական համակարգի բարեփոխում:
5. Հանրային իրազեկման և կրթական քարոզարշավներ:
6. Միջազգային չափանիշերի և պրակտիկաների կիրառման խթանում:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԻՄՔՈՎ
ԲՈՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՏՈՒԺԱԾ ԱՆՁԱՆՑ
ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության նպատակը և անհրաժեշտությունը

Սույն հետազոտությունը ուսումնասիրության առարկա է դարձնում Երևանում, Գյումրիում և Սպիտակում կանանց իրազեկվածությունը և մոտեցումները բռնության իրավիճակի և պաշտպանության մեխանիզմների վերաբերյալ, ինչը թույլ է տալիս դիտարկել մարզային առանձնահատկությունները և անհրաժեշտ առանձնահատուկ մոտեցումները:

Սույն հետազոտության նպատակն է համապարփակ կերպով ուսումնասիրել կանանց և աղջիկների նկատմամբ բռնության դեպքերում տուժողներին տրամադրվելիք աջակցության ծառայությունների հասանելիությունը Հայաստանում: Հետազոտական խնդիրները ներառում են հարցվողների սոցիալ-ժողովրդագրական բնութագրերի, կանանց իրավունքների և պաշտպանության մեխանիզմների մասին իրազեկվածության գնահատումը, ընտանեկան բռնության հանրային ընկալումների, առկա օժանդակ ծառայությունների վերաբերյալ տեղեկացվածության ուսումնասիրությունը, այդ ծառայություններից օգտվելու խոչընդոտների հայտնաբերումը և իրազեկման արդյունավետ մեթոդների մշակումը:

Հետազոտությունն իրականացվել է մայրաքաղաք Երևանում և երկու խոշոր քաղաքներում՝ Գյումրիում և Սպիտակում, 18-65 տարեկան կանանց շրջանում: Ուսումնասիրության ընտրանքը բաղկացած է 397 մասնակիցներից՝ տարբեր սոցիալ-ժողովրդագրական բնութագրերով: Մասնակիցների միջին տարիքը մոտ 42-ն է եղել: Մասնակիցների գրեթե կեսը՝ 48,9%-ը, չի ունեցել բարձրագույն կրթություն, իսկ մեծամասնությունը՝ 58,7%-ը, եղել է ամուսնացած: Մասնակիցների մեծ մասը՝ 64,0%-ը, ունեցել է զբաղվածություն, իսկ 51,4%-ը հայտնել է, որ ունի 140,000 ՀՀ դրամից պակաս եկամուտ (ՀՀ վիճակագրական հանձնաժողովի պաշտոնական տվյալների համաձայն՝ միջին ամսական եկամուտը Հայաստանում 282,568 ՀՀ դրամ է): Մասնակիցների ճնշող մեծամասնությունը՝ 94,0%-ը, երեք քաղաքներում բնակվող Հայաստանի քաղաքացիներ են: Ընդհանուր առմամբ, ընտրանքը ցույց է տվել սոցիալ-ժողովրդագրական տարբեր բնութագրեր՝ ապահովելով ուսումնասիրվող բնակչության համապարփակ դիտարկում:

Հետազոտության արդյունքները

Անհատական ընկալում և իրավական պաշտպանության միջոցների մասին տեղեկացվածություն.

Հայաստանում կանանց իրավունքների պաշտպանությունը հասարակության զգալի մասի կողմից գնահատվում է որպես «մասամբ պաշտպանված» (հարցվածների 47.09%), ինչը վկայում է իրավական և սոցիալական համակարգերի նկատմամբ դժգոհության մասին: Հարցվածների 22.17 %-ը տեղյակ չէ ընտանեկան բռնության վերաբերյալ իրավակարգավորումներից, ինչը փաստում է տեղեկության տարածման ու կրթական ջանքերի բացերի մասին: Այնուամենայնիվ, շատերը որպես կարևոր միջոց նշել են նախազգուշացման մեխանիզմի ներդրումը: Աշխատանքային կարգավիճակը զգալի ազդեցություն ունի ընկալումների վրա. աշխատողներն ու տնային տնտեսուհիները ունեն ավելի դրական տեսակետներ, քան գործազուրկները: Տարածաշրջանային տարբերությունները նույնպես ակնհայտ են. Գյումրու բնակիչների մեծ մասը համարում է, որ կանանց իրավունքները քիչ են պաշտպանվում կամ ընդհանրապես չեն պաշտպանվում (54.68%), մինչդեռ Երևանի և Սպիտակի բնակիչներն ունեն ավելի դրական ընկալումներ (այդպես են կարծում համապատասխանաբար 27.52%-ը և 19.63%-ը):

Ընտանեկան բռնության հանրային ընկալումը.

Հարցվածների զգալի մասը դժվարանում է ճանաչել ոչ ակնառու բռնության ձևերը, ինչը վկայում է համապատասխան իրազեկության պակասի մասին: Որպեսզի բացահայտվեն, թե որ վարքագծերն են ավելի դժվար ճանաչվում, 17 վարքագիծ դասակարգվել է ակնհայտ և ոչ ակնհայտ բռնության ձևերի մեջ.

- Ակնհայտ բռնության ձևեր՝ ֆիզիկական բռնություն, երեխայի խնամակալության սպառնալիքներ, սեռական նվաստացնող վիրավորանքներ և այլն:
- Ոչ ակնհայտ բռնության ձևեր՝ լուրջամբ պատժում, վրդովված հայացքներ, ֆինանսական միջոցների պահում, ընկերներից/ընտանիքից մեկուսացում և այլն:

Ըստ քաղաքների՝ Երևանում ամենաշատն են դժվարանում ճանաչել թե՛ ակնհայտ, թե՛ ոչ ակնառու բռնությունների ձևերը, իսկ Գյումրիում բնակիչները առավել իրազեկված են:

Անհատական իրազեկվածությունը բռնությունից տուժած անձանց աջակցության վերաբերյալ.

Հարցվածների միայն 47.07%-ն է իրազեկված այս ծառայությունների վերաբերյալ, ինչը մատնանշում է հասարակության մեջ տեղեկացվածության և հաղորդակցության կարևոր բացը:

Հարցվողների մեծամասնությունը (81.03%) նշել է, որ չի ճանաչում որևէ մեկին, ով օգտվել է աջակցության ծառայություններից, մինչդեռ 5.13%-ը ծանոթ է իր շրջապատում այդ ծառայություններից օգտված անձի, իսկ 13.85%-ին՝ իր շրջապատից դուրս անձի:

Հարցվողների ընկալմամբ՝ կանանց և աղջիկների նկատմամբ բռնության ենթարկվածների համար մատչելի ծառայություններից առավել հասանելի է իրավաբանական աջակցությունը: Սակայն աշխատանքի տեղավորման, հոգեբանական և ֆինանսական աջակցության, ինչպես նաև ապաստարանների ծառայություններն ընկալվում են որպես ավելի քիչ հասանելի: Բացի այդ՝ բժշկական աջակցությունը, միասնական սոցիալական ծառայությունները և բջջային հավելվածները նույնպես ունեն ցածր մատչելիություն:

Աջակցության ծառայությունների մասին իրազեկվածությունը զգալիորեն տարբերվում է ըստ տարիքի, կրթական մակարդակի, զբաղվածության, հաշմանդամության կարգավիճակի, ընտանեկան դրության և բնակության վայրի:

Տարիքային խմբեր: Երիտասարդ կանայք (18-30 տարեկան) ցուցաբերել են բարձր իրազեկվածություն (56.82%), իսկ 31-40 տարեկանների շրջանում այս ցուցանիշը 39.80%-ն է:

Կրթություն: Հետբուհական կրթություն ունեցող կանայք ունեն ամենաբարձր իրազեկվածությունը՝ 66.23%, իսկ բարձրագույն կրթություն չունեցող կանայք՝ 40.10%:

Զբաղվածություն: Աշխատող կանայք (49.40%) ավելի իրազեկ են, քան տնային տնտեսուհիները (42.86%) կամ գործազուրկները (43.04%):

Հաշմանդամություն: Հաշմանդամություն ունեցող կանայք ունեն ավելի ցածր իրազեկվածություն (45.00%) և ավելի պակաս հետաքրքրվածություն (25.00%):

Բնակության քաղաք: Սպիտակի բնակիչներն ունեն ամենաբարձր իրազեկվածությունը (52.34%), իսկ Գյումրիում այս ցուցանիշը ամենացածրն է՝ 46.76%:

Տեղեկատվության աղբյուրները.

Առաջարկվող աջակցող ծառայությունների վերաբերյալ վստահելի տեղեկատվության աղբյուրներից առավել տարածվածը համացանցն է, որը նշել է հարցվողների 72.54%-ը: Այլ կարևոր աղբյուրներն են ընկերները (29.47%), հասարակական կազմակերպությունները

(28.46%) և ոստիկանությունը (26.95%): Ավելի քիչ նշված աղբյուրներն են թեժ գծերը (18.89%), ընտանիքի անդամները (15.37%), պաստառներն ու գովազդային վահանակները (11.59%) և բուժաշխատողները (9.57%):

Հարցվողների առաջարկած առաջին քայլերը, եթե կանայք կամ աղջիկները դիմեն իրենց աջակցություն ստանալու համար, ներառում են.

- թեժ գիծ զանգահարելը (28.69%),
- ոստիկանություն դիմելը (28.15%):

Այլ առաջարկվող քայլերն են.

- կնոջ կամ ամուսնու հետ հաշտություն փնտրելը (17.69%),
- մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ դիմելը (14.75%),
- 114 թեժ գծին զանգահարելը (8.04%),
- որևէ գործողություն չձեռնարկելը (2.68%):

2021 թվականին ընտանեկան բռնության վերաբերյալ հարցման տվյալները ցույց են տալիս, որ ընտանեկան բռնության ենթարկված կանանց մոտ երկու երրորդը ոչ մի գործողություն չի ձեռնարկել: Հարցման առաջարկվող քայլերի և իրական վարքի միջև այս տարբերությունը մատնանշում է կարևոր հակասություն: Թեև մարդիկ տեսականորեն կարող են աջակցել պրակտիկ գործողություններին, իրականում վախը, խարանը կամ ծառայությունների նկատմամբ վստահության բացակայությունը կարող են ազդեցություն ունենալ նրանց իրական վարքի վրա:

Աջակցման ծառայությունների և իրազեկվածության բարձրացման խոչընդոտները.

Հարցվողների 75.31%-ը մատնանշել է ամոթը և հասարակական խարանը որպես աջակցության ծառայություններին դիմելու հիմնական խոչընդոտներ: Երկրորդ խոչընդոտը ծառայությունների նկատմամբ վստահության պակասն է՝ 60.71%: 58.19%-ը մատնանշել է ծառայությունների մասին տեղեկացվածության պակասը՝ ընդգծելով ավելի մեծ իրազեկման և կրթական ջանքերի կարիքը: Այլ խոչընդոտներ են՝

- մշակութային և սոցիալական նորմերը (42.32%),
- ֆինանսական կախվածությունը (37.28%),
- մատչելիության խնդիրները (19.9%),
- ծառայությունների բացակայությունը (20.15%):

Հետաքրքիր է, որ միայն 8.06%-ն է մատնանշել իրավական և վարչական խոչընդոտները:

Ինչ վերաբերում է իրազեկության բարձրացման համար արդյունավետ ուղիներին, հարցվածների 69.02%-ը համացանցը համարել է ամենաարդյունավետ աղբյուրը, որին հաջորդում են ՀԿ-ները (49.62%) և սոցիալական մեդիան (45.34%): 36.52%-ը նշել է հեռուստատեսությունը: Կրթական հաստատությունները (24.18%) և բուժաշխատողները (17.63%) նույնպես դիտարկվել են որպես արդյունավետ: Ավելի քիչ նշվող աղբյուրներն են՝ ընկերներ (19.4%), ընտանիքի անդամներ (14.86%), ռադիո (11.34%) և բջջային հավելվածներ (10.33%):

Այս տվյալները ցույց են տալիս, որ իրազեկության բարձրացմանը նպաստում են հիմնականում թվային և կազմակերպչական ուղիները, իսկ ավանդական մեդիան, ինչպիսին հեռուստատեսությունն է, դեռևս կարևոր դեր ունի:

ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՈՆՈՒԹՅԱՆ
ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՈՆՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ
ՀԱՎԱՔՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ
ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության նպատակը և անհրաժեշտությունը

Սույն հետազոտությունը մանրակրկիտ ուսումնասիրության է ենթարկում ՀՀ քրեաիրավական կարգավորումների համապատասխանությունը Ստամբուլյան կոնվենցիայի պահանջներին՝ մատնանշելով անհրաժեշտ փոփոխությունները: Ուսումնասիրվել են նաև ոստիկանության, քննչական մարմնի, դատախազության և դատական իշխանության կողմից կանանց նկատմամբ բռնության դեպքերի վերաբերյալ տվյալների հավաքումը, ինչպես նաև վիճակագրական կոմիտեի կողմից իրականացված ուսումնասիրությունները և անձնագրային տվյալները՝ վերհանելով դրանց թերացումներն ու դրանց բարելավմանն ուղղված անհրաժեշտ միջոցառումները:

Հետազոտությունը նպատակ ունի ուսումնասիրելու կանանց նկատմամբ բռնության բոլոր տեսակների և ընտանեկան բռնության վերաբերյալ վիճակագրության հավաքման, ինչպես նաև բնակչության շրջանում իրականացվող հարցումների, հետազոտությունների իրավական կարգավորումները և գործելակերպը:

Տվյալների հավաքումը, վիճակագրության վարումը և դրանց վերաբերյալ հանրային իրազեկումը Միավորված ազգերի կազմակերպության մի շարք փաստաթղթերի պահանջն է, ինչպես նաև ներառված է Ստամբուլյան կոնվենցիայի 11-րդ հոդվածում²²: Տվյալները պետք է հավաքվեն, մի կողմից, հետազոտությունների և բնակչության շրջանում հարցումների միջոցով, որոնք կարող են օգտագործվել գենդերային բռնության տարածվածությունը չափելու համար, մյուս կողմից՝ վարչական տվյալների, այսինքն՝ պետական մարմինների գործունեության ընթացքում ձեռք բերված տվյալների հավաքման միջոցով: Տվյալների հավաքումը և վերլուծումը առանցքային նշանակություն ունեն իրավիճակի վերաբերյալ համապարփակ պատկերացում կազմելու և առկա խնդիրների հասցեագրմանն ուղղված օրենսդրական կարգավորումների և քաղաքականությունների մշակման հարցում: Սույն հետազոտության շրջանակում ուսումնասիրվել է Գենդերային հավասարության եվրոպական ինստիտուտի փորձը, որը մշակել է ցուցիչներ: Սույն հետազոտությունում ամփոփված են նաև այս կառույցի մոտեցումներն ու տվյալների հավաքման, վիճակագրության վարման հիմնական սկզբունքները:

Տվյալները ձեռք են բերվել բաց աղբյուրներից, ՀՀ ՆԳՆ ոստիկանությունից, ՀՀ քննչական կոմիտեից, ՀՀ դատախազությունից, ՀՀ դատական դեպարտամենտից և ՀՀ վիճակագրական կոմիտեից և ներառել են 2019-2024 թվականներին ընկած ժամանակահատվածը:

Հետազոտության արդյունքները

Հարցումների արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ տվյալների հավաքումը Ստամբուլյան կոնվենցիայի պահանջներին առավել համապատասխան կերպով իրականացվել է ոստիկանության (38%), այնուհետև՝ վիճակագրական կոմիտեի (28%), այնուհետև՝ քննչական կոմիտեի (23%), այնուհետև՝ դատախազության կողմից (21%): 2023 թվականի ընթացքում տվյալների հավաքման համապատասխանությունն էականորեն բարելավվել է ոստիկանության կողմից՝ հասնելով 48%-ի, և դատախազության կողմից՝ հասնելով 38%-ի: Այս մարմինների կողմից տրամադրված վիճակագրական տվյալները ներկայացված են հետազոտության առաջին բաժնում:

Ընտանիքում բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառմանն առնչվող հարաբերությունները կարգավորվում են ՀՀ Կառավարության 2019 թվականի հոկտեմբերի

²² «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրանց դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիա, Հոդված 11, <https://rm.coe.int/168046246d>

10-ի N 1381-Ն որոշմամբ սահմանված կարգով: Տվյալների արձանագրման թերթիկը պարունակում է հարցեր հետևյալ տվյալների շուրջ՝ դեպքի ժամանակագրություն, սեռատարիքային տվյալներ, բնության տեսակ, բնության դրսևորումներ, գործադրած եղանակներ, բնարարի հետ հարաբերություններ, պաշտպանության միջոցների կիրառում, բնության վայր, երեխաների ներկայություն, տուժողի հաշմանդամություն կամ այլ կարգավիճակի առկայություն, դատական ակտի առկայություն:

ՀՀ վիճակագրական կոմիտեն կանանց նկատմամբ բնության վերջին հետազոտությունն իրականացրել 2021 թվականին²³: Նման հետազոտությունները, սակայն, չունեն որևէ հստակ ժամանակացույց կամ պարբերականություն, ինչը թույլ չի տալիս կայուն և շարունակական կերպով հետևել իրավիճակի ընթացքին: Մյուս կողմից՝ պետական մարմինների կողմից իրականացվող տվյալների հավաքումը վերաբերում է ընտանեկան բնություններին, այսինքն՝ դուրս են մնում ընտանիքից դուրս կանանց նկատմամբ գործադրված բնության դեպքերը, հետևաբար դրանք չեն կարող համարվել կանանց նկատմամբ բնության ընդհանուր իրավիճակին վերաբերող տվյալներ:

Հետազոտության երկրորդ մասում ամփոփված է Ստամբուլյան կոնվենցիայով սահմանված բնության տեսակների համեմատական վերլուծությունը ՀՀ նախկին և գործող քրեական օրենսգրքերի հոդվածների հետ:

Հոդված 33. Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական կամ այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու համար, որ քրեականացվեն դիտավորությամբ շարունակաբար կատարվող այն գործողությունները, որոնք հարկադրանքի կամ սպառնալիքների միջոցով լքջորեն խախտում են մեկ այլ անձի հոգեբանական անձեռնմխելիությունը:

«Կանանց նկատմամբ բնության և ընտանեկան բնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիա

ԵԽ կոնվենցիա	ՀՀ քրեական նոր օրենսգրքի հոդվածներ
33-րդ հոդվածը՝ հոգեբանական բնությունը	194-րդ հոդվածը՝ հոգեկան ներգործությունը,
	196-րդ հոդվածը՝ ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը,
	162-րդ հոդվածը՝ ինքնասպանության հասցնելը,
	163-րդ հոդվածը՝ ինքնասպանության հակելը,
	164-րդ հոդվածը՝ ինքնասպանությանը նպաստելը,
	250-րդ հոդվածը՝ ծնողական իրավունքներից հրաժարվելուն հակելը կամ հարկադրելը,
	260-րդ հոդվածը՝ գույքային վնաս պատճառելը սպառնալիքի կամ բռնություն գործադրելու միջոցով:

Դիտարկվել է կոնվենցիայի՝ անձի հոգեբանական անձեռնմխելիության պաշտպանությանն ուղղված 33-րդ հոդվածը, որի շրջանակում պետք է նախատեսվեն պաշտպանության մեխանիզմներ ոչ միայն ընտանիքում հոգեբանական բռնության, այլև այլ իրավիճակներում, ինչպես, օրինակ՝ թվային տիրույթում հնչած վիրավորական,

²³ «Կանանց նկատմամբ ընտանեկան բռնության հետազոտություն», երկլեզու վերլուծական զեկույց-հաշվետվություն, <https://armstat.am/am/?nid=82&id=2487>

գրպարտիչ արտահայտությունները: ՀՀ քրեական նոր օրենսգիրքը նախատեսել է պատասխանատվություն հոգեբանական ներգործության, ծանր հոգեկան տառապանք պատճառելու համար, ինչպես նաև բազմաթիվ այլ արարքների, որոնք ենթադրում են սպառնալիքների և ճնշումների միջոցով անձին որևէ արարքի հակելը կամ հարկադրելը: Առաջարկվում է կատարել լրացում առ այն, որ այս արարքները կարող են դրսևորվել նաև տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների միջոցով:

Հոդված 34. Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական կամ այլ անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու, որ քրեականացվեն մեկ այլ անձի դեմ դիտավորությամբ շարունակաբար կատարվող սպառնալից գործողությունները, որոնք այդ անձի մեջ վախ են առաջացնում սեփական անվտանգության համար:

«Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիա

ԵՍ կոնվենցիա	ՀՀ քրեական նոր օրենսգրքի հոդվածներ
34-րդ հոդվածը՝ հետամտելը	196.1-ին հոդվածը՝ հետամտելը

Դիտարկվել է նաև կոնվենցիայի 34-րդ հոդվածը, որը պարտավորեցնում է պաշտպանություն նախատեսել անձին հետամտելու համար: ՀՀ քրեական օրենսգրքի համաձայն՝ հետամտումը սահմանվել է որպես անձին հետևելը, տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաներ օգտագործելով, նրա բնակության, աշխատանքի կամ ուսման, զբաղմունքի վայր այցելելու միջոցով կամ այլ եղանակով անցանկալի հաղորդակցության մեջ ներգրավելը կամ ներգրավելու փորձ կատարելը, անձնական իրերի վրա հետքեր թողնելը, անձի տվյալներով առցանց հաշիվներ բացելը, եթե այդ արարքը կատարվել է պարբերաբար և անձի մեջ վախ կամ անհանգստություն է առաջացրել իր կամ իր մերձավորի անվտանգության համար կամ ստիպել է եապես փոխել իր կենսակերպը կամ այն փոխելու իրական անհրաժեշտություն է առաջացրել:

Հոդված 35. Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական կամ այլ միջոցներ՝ ապահովելու համար, որ քրեականացվեն մեկ այլ անձի դեմ դիտավորությամբ կատարվող ֆիզիկական բռնության գործողությունները:

«Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիա

ԵՍ կոնվենցիա	ՀՀ քրեական նոր օրենսգրքի հոդվածներ
35-րդ հոդվածը՝ ֆիզիկական բռնությունը	155-րդ հոդվածը՝ սպանությունը, 156-րդ հոդվածը՝ հոգեկան խիստ հուզմունքի վիճակում կատարված սպանությունը, 157-րդ հոդվածը՝ ծննդկանի կամ ծննդաբերի կողմից երեխայի սպանությունը, 166-րդ հոդվածը՝ առողջությանը ծանր վնաս պատճառելը, 167-րդ հոդվածը՝ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը, 171-րդ հոդվածը՝ առողջությանը թեթև վնաս պատճառելը,

	171-րդ հոդվածը՝ առողջությանը թեթև վնաս պատճառելը, 182-րդ հոդվածը՝ վտանգի մեջ թողնելը, 191-րդ հոդվածը՝ մարդուն առևանգելը, 192-րդ հոդվածը՝ ազատությունից ապօրինի զրկելը, 195-րդ հոդվածը՝ ֆիզիկական ներգործությունը, 196 -րդ հոդվածը՝ ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը:
--	--

Կոնվենցիայի 35-րդ հոդվածը պարտավորեցնում է պաշտպանություն նախատեսել ֆիզիկական բռնությունից: ՀՀ քրեական օրենսգիրքը պատասխանատվություն է նախատեսում ֆիզիկական բռնություն ենթադրող մի շարք արարքների համար, ինչպիսիք են ֆիզիկական ներգործությունը, ծանր ֆիզիկական ցավ պատճառելը, առողջությանը տարբեր ծանրության վնաս պատճառելը և այլն:

Հոդված 36.

1. Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական կամ այլ անհրաժեշտ բոլոր միջոցները՝ դիտավորությամբ կատարվող հետևյալ գործողությունները քրեականացնելու համար՝

ա. առանց անձի համաձայնության, վագինալ, անալ և օրալ ճանապարհով թափանցելու միջոցով, մարմնի որևէ մասի կամ առարկայի միջոցով սեռական բնույթի գործողություն կատարելը,

բ. առանց անձի համաձայնության սեռական բնույթի այլ գործողություն կատարելը,

գ. անձին, առանց նրա համաձայնության, երրորդ անձի հետ սեռական բնույթի գործողություններ կատարելուն կամ ենթարկվելուն ստիպելը:

2. Համաձայնությունը պետք է տրվի կամովին՝ անձի ազատ կամահայտնության հիման վրա, որպիսին պետք է գնահատվի վերաբերելի բոլոր հանգամանքներն իրենց ամբողջության մեջ դիտարկելու արդյունքում:

3. Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական կամ այլ անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու համար, որ սույն հոդվածի 1-ին մասի դրույթները կիրառելի լինեն նաև այն արարքների նկատմամբ, որոնք կատարվում են ներկա կամ նախկին ամուսնու կամ զուգընկերոջ նկատմամբ՝ ներպետական իրավունքում դրանց տրված իմաստով:

«Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիա

Եև կոնվենցիա	ՀՀ քրեական նոր օրենսգրքի հոդվածներ
36-րդ հոդվածը՝ սեռական բռնությունը	198-րդ հոդվածը՝ սեքսուալ բնույթի բռնի գործողությունները, 199-րդ հոդվածը՝ սեքսուալ բնույթի գործողություններին հարկադրելը, 200-րդ հոդվածը՝ սեքսուալ բնույթի գործողություններ կատարելը 16 տարին չլրացած անձի նկատմամբ, 201-րդ հոդվածը՝ անառակաբարո արարք կատարելը, 202-րդ հոդվածը՝ 16 տարին չլրացած անձին սեռական հարաբերություն կամ սեքսուալ բնույթի այլ գործողություններ կամ մանկական պոռնոգրաֆիա ստեղծել կամ արտադրել առաջարկել (գրումիսգ), 300-րդ հոդվածը՝ պոռնկագրական նյութեր կամ առարկաներ պատրաստելը, տարածելը կամ պահպանելը:

Կոնվենցիայի 36-րդ հոդվածը պարտավորեցնում է պաշտպանություն նախատեսել սեռական բռնության դեմ: ՀՀ քրեական օրենսգիրքը նախատեսում է սեռական ազատության և անձեռնմխելիության պաշտպանությանն ուղղված մի շարք հոդվածներ, որոնք բարելավել են կարգավորման շրջանակը նախորդ օրենսգրքի համեմատ:

Հոդված 37.

1. Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական կամ այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու համար, որ քրեականացվի չափահասին կամ երեխային ամուսնանալուն դիտավորությամբ հարկադրելը:
2. Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական կամ այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու համար, որ քրեականացվի չափահասին կամ երեխային ամուսնանալուն հարկադրելու նպատակով այդ անձի քաղաքացիության կամ բնակության վայրի պետություն չհանդիսացող պետության տարածք մուտք գործելուն դիտավորությամբ գայթակղելը:

«Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիա

Եև կոնվենցիա	ՀՀ քրեական նոր օրենսգրքի հոդվածներ
37-րդ հոդվածը՝ հարկադիր ամուսնությունը	197-րդ հոդվածը՝ ամուսնությանը, ամուսնալուծությանը կամ երեխա ունենալուն հարկադրելը

Կոնվենցիայի 37-րդ հոդվածով նախատեսված է ամուսնության հարկադրանքն արգելելու պարտավորություն: ՀՀ օրենսդրությամբ պետք է առավել խիստ պատասխանատվություն նախատեսվի անչափահաս կամ անգործունակ անձանց ամուսնության հարկադրելու համար:

Հոդված 38. Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական կամ այլ բնույթի անհրաժեշտ միջոցներ՝ դիտավորությամբ կատարված հետևյալ գործողությունների քրեականացումն ապահովելու համար.

ա. սեռական մեծ և փոքր շուրթերը կամ ծլիկը լրիվ կամ մասնակի անդամահատելը, կապելը/ինֆիբուլացնելը կամ խեղման այլ գործողությունների ենթարկելը,

բ. (ա) կետում թվարկված գործողություններին ենթարկվելուն որևէ կնոջ ստիպելը կամ դրանց ենթարկվելու համար կին տրամադրելը,

գ. (ա) կետում թվարկված գործողություններին ենթարկվելուն որևէ աղջկա ստիպելը, դրդելը կամ դրանց ենթարկվելու համար աղջիկ տրամադրելը:

«Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիա

ԵՆ կոնվենցիա	ՀՀ քրեական նոր օրենսգրքի հոդվածներ
38-րդ հոդվածը՝ կանանց սեռական օրգանների խեղումը	166-րդ հոդվածը՝ առողջությանը ծանր վնաս պատճառելը, 167-րդ հոդվածը՝ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը

Կոնվենցիայի 38-րդ հոդվածը նախատեսում է կանանց սեռական օրգանների խեղումն արգելելու պարտավորությունը: Չնայած նրան, որ ՀՀ քրեական օրենսգրքով ուղղակիորեն այս արարքի արգելք նախատեսված չէ, այն կարող է որակվել որպես առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնաս պատճառել՝ կախված հետևանքներից: Այնուամենայնիվ, այս արարքի վերաբերյալ վիճակագրական տվյալներ հավաքել հնարավոր չէ:

Հոդված 39. Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական կամ այլ բնույթի անհրաժեշտ միջոցներ՝ դիտավորությամբ կատարված հետևյալ գործողությունների քրեականացումն ապահովելու համար.

ա. կնոջ հղիության արհեստական դադարեցումը՝ առանց նրա կողմից նախապես և տեղեկացված կերպով տրված համաձայնության,

բ. վիրաբուժական միջամտության իրականացում, որի նպատակը կամ ազդեցությունն է դադարեցնել կնոջ՝ բնական ճանապարհով վերարտադրվելու կարողությունը՝ առանց նրա նախնական և տեղեկացված համաձայնության կամ ընթացակարգի ըմբռնման:

«Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիա

ԵՆ կոնվենցիա	ՀՀ քրեական նոր օրենսգրքի հոդվածներ
39-րդ հոդվածը՝ հղիության արհեստական դադարեցումը կամ ստերիլիզացում կատարելուն հարկադրելը	175-րդ հոդվածը՝ հղիության արհեստական ընդհատում (աբորտ) կատարելը կամ ամլացումը, 176-րդ հոդվածը՝ հղիության արհեստական ընդհատմանը (աբորտ կատարելուն) կամ ամլացմանը հարկադրելը:

Կոնվենցիայի 39-րդ հոդվածը նախատեսում է հղիության ընդհատման և ստերիլիզացման հարկադրանքի արգելքի պարտավորությունը: ՀՀ քրեական օրենսգրքի կարգավորումները համապատասխանում են կոնվենցիայի պահանջներին:

Հոդված 40. Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական կամ այլ միջոցներ՝ ապահովելու, որ սեռական բնույթի անցանկալի խոսքային, ոչ խոսքային կամ ֆիզիկական ցանկացած վարքագիծ, որը նպատակ ունի խոցելու անձի արժանապատվությունը կամ հանգեցնում է դրան, մասնավորապես՝ ճնշող, թշնամական, նվաստացուցիչ կամ վիրավորական մթնոլորտ ստեղծելը, ենթակա է քրեական կամ իրավական այլ պատժամիջոցի:

«Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիա

ԵՆ կոնվենցիա	ՀՀ աշխատանքային օրենսգրքի հոդվածներ
40-րդ հոդվածը՝ սեռական ոտնձգությունը	3.3-րդ հոդվածը՝ աշխատանքում (աշխատավայրում) բռնության կամ սեռական ոտնձգության արգելքը

Կոնվենցիայի 40-րդ հոդվածը պահանջում է անձանց պաշտպանել արժանապատվությունը նվաստացնող սեռական անցանկալի գործողություններից կամ խոսքից: ՀՀ աշխատանքային օրենսգրքը նախատեսում է աշխատավայրում կամ աշխատանքային պարտավորությունների կատարման ընթացքում սեռական ոտնձգությունը, այդ թվում՝ սեռական բնույթի անցանկալի խոսքն ու գործողությունները, սակայն սեռական ոտնձգության դեմ բողոքների ներկայացման, քննության և դրանց արձագանքման վերաբերյալ կարգը սահմանված չէ: ՀՀ քրեական օրենսգրքի կարգավորումները համապատասխանում են կոնվենցիայի պահանջներին:

Այս վերլուծության արդյունքում պետությանը ներկայացվել են ինչպես օրենսդրական կարգավորումների ոլորտում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու, այնպես էլ կազմակերպական բնույթի առաջարկներ:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ԳԵՆԴԵՐԱԶԳԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության նպատակը և անհրաժեշտությունը

Սույն հետազոտությունը մանրամասն ուսումնասիրում է գենդերային հավասարության ապահովմանն ուղղված կարագավորումների առկայությունը կրթական հաստատությունների կանոնադրություններում և անձանց պաշտպանությունն իրականացնող առաջնային օղակ հանդիսացող մանկավարժների և ուսուցիչների կրթական ծրագրերում, ինչը թույլ է տալիս պատկերացում կազմել հասարակության կրթության և դաստիարակման ընթացքում գենդերային հավասարության գաղափարի ներդրման վերաբերյալ պետական քաղաքականության մասին և դիտարկել ռիսկային կարգավորումները, որոնք կարող են սխալ մեկնաբանման հիմք դառնալ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հասարակության ձևավորման գործում առաջնային կարևորություն ունի կրթական համակարգում արժեքահեն որակյալ ծրագիրը՝ էական է դրա նկատմամբ հատուկ ուշադրությունը:

Այս հետազոտության նպատակն է ուսումնասիրել կրթական համակարգում գենդերազգային ուսուցման մակարդակը և խտրականության հավանական դրսևորումները: Որպես խտրականության դեպքերում արձագանքող մասնագետների առաջին օղակ և կրթական համակարգում առաջնային պատասխանատվություն կրող անձինք՝ ուսումնասիրության համար առանձնացվել են մանկավարժների, բժշկական ոլորտի մասնագետների, սոցիալական աշխատողների, հոգեբանների, իրավապահ համակարգի աշխատողների մասնագիտական որակավորման ծրագրերը. ուսումնասիրվել են դրանց բովանդակության գենդերազգայնությունն ու ներառականությունը:

Ուսումնասիրության շրջանակում դիտարկվել են տարրական և միջին դպրոցը, մանկավարժի, ուսուցչի, քննիչի և բուժաշխատողի որակավորում տրամադրող բարձրագույն ուսումնական հաստատությունները, մասնագիտական վերապատրաստումները:

Հանրակրթական հաստատություններում ուսումնասիրության առարկան եղել են ոլորտը կարգավորող իրավական ակտերում խտրականության բացառման և գենդերազգայնության կանոնակարգումը և դրան ուղղված պահանջները:

Բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումնասիրվել է գենդերազգայնության արտացոլումը հաստատությունների կանոնադրություններում և մանկավարժական համալսարանի առարկայական ծրագրերում:

Մասնագետների վերապատրաստման ծրագրերում ուսումնասիրվել են ուսուցչական կրթահամալիրի ծրագրերի բովանդակության գենդերազգայնությունը, ուսուցիչների, իրավապահ համակարգի աշխատողների և բժիշկների վերապատրաստումների կանոնակարգումը:

Հետազոտության արդյունքները

Առաջին բաժնում ամփոփվել են հետևյալ արդյունքները.

Նախ և առաջ վերլուծվել են օրենսդրական ակտերը, որոնք պարունակում են գենդերային հավասարության վերաբերյալ դրույթներ, ինչպես, օրինակ՝ «Կրթության մասին» ՀՀ օրենքը, «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքը²⁴: Այս ակտերի դրույթներից բխում է, որ պետությունը գենդերային հավասարությունն ու խտրականության բացառումն ապահովելու նպատակով

²⁴ ՀՀ Ազգային ժողով (2013). «Կանանց և տղամարդկանց իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» օրենք. վերցված է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=83841>

պետք է իրականացնի հասարակության շրջանում իրազեկման, կրթության միջոցառումներ, ինչպես նաև նման գործիքակազմի ներառում պետական քաղաքականություններում:

Կիրառված բառապաշարը օրենքներում չեզոք է, օգտագործված են սեռի կամ գենդերի տարանջատում չենթադրող բառեր: Այնուամենայնիվ, «գենդեր» եզրույթը իրավական ակտերում կիրառված չէ:

Ուսումնասիրվել է «համամարդկայնության» և «մարդասիրության»՝ որպես անձի կրթության և դաստիարակման հիմքում ընկած արժեքների՝ իրավական ակտերում և քաղաքականություններում ներառելու հարցը: Ուսումնասիրված նյութերը ներառում են հանդուրժողականությունը ընկերների, ընտանիքի և հատուկ կարիքներ ունեցող անձանց նկատմամբ, ժողովրդավարությունը, ապրումակցումը, ինքնասիրությունն ու ինքնագնահատումը, ինչպես նաև համամարդկային և ազգային արժեքների ներդաշնակ համադրումը: Հանրակրթության պետական չափորոշիչները ևս համամարդկային այս արժեքները ձևակերպել են որպես կրթության ոլորտում վերաբերմունքի և դաստիարակության հիմնական ուղղորդիչներ, սկզբունքներ:

Ներառականությունը և անհատականությունը մինչ այժմ կարգավորվել են մտավոր և ֆիզիկական հաշմանդամություն ունեցող անձանց համար հավասար պայմաններ ստեղծելու համատեքստում, սակայն «ՀՀ կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագրում»²⁵ ներառականությունը հաշվի է առնում նաև անձի՝ կրթությունից դուրս մնալու այլ ռիսկային հանգամանքներ ևս՝ ներառյալ գենդերային անհավասարությունը:

Վարքին և վարվելակերպին վերաբերող կարգավորումների ուսումնասիրությունը վերհանել է հանրակրթության պետական չափորոշչում²⁶ հետևյալ խնդրահարույց ձևակերպումը՝ «ճանաչի և պահպանի հասարակական վարքի՝ իրեն առնչվող կանոններն ու իրավունքները, այդ թվում՝ կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հնարավորությունների մասով, հարգի ուրիշ մարդկանց, ընկալի յուրաքանչյուր մարդու առանձնահատուկ և արժեքավոր լինելը»: «Հասարակական վարք» ձևակերպման մեկնաբանությունը կարող է միանշանակորեն հանգեցնել խտրական վերաբերմունքի և դրսևորումների, ուսուցիչների խտրական վերաբերմունքի, ինչպես նաև աշակերտների շրջանում խտրական մոտեցումների ձևավորման առումով:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գենդերային հավասարությունը ՀՀ օրենքներում և կրթական փաստաթղթերում արտացոլվում է երկու հիմնական ուղղություններով՝ իրավահավասարություն և տնտեսական զարգացման մեջ դերակատարություն: Իրավահավասարությունը շեշտադրվում է «Կրթության մասին» և «Նախնական մասնագիտական և միջին մասնագիտական կրթության մասին» օրենքներում, ինչպես նաև հանրակրթության պետական չափորոշիչի և առարկայական չափորոշիչների միջոցով: Գենդերային հավասարությունը դիտարկվում է որպես մարդկային կապիտալի զարգացման կարևոր պայման, որն ունի նաև տնտեսական առավելություններ: Սակայն ուսումնասիրված նյութերը չեն անդրադառնում ֆինանսական բաշխման արդարությանը և պարունակում են կանանց տնտեսական դերի վերաբերյալ կարծրատիպային օրինակներ:

Ուսումնասիրության արդյունքներով՝ գենդերային հավասարությունը ՀՀ կրթական համակարգում արտացոլվում է իրավական փաստաթղթերում, սակայն դասագրքերում պահպանվում են սեռային կարծրատիպերը: Օրենքները շեշտում են իրավահավասարությունն ու գենդերային հավասարությունը որպես կրթության որակի և տնտեսական զարգացման միջոց, սակայն դասագրքերը ներկայացնում են կանանց և տղամարդկանց դերերը սահմանափակված և կարծրացած ձևով: Կանանց դերը հաճախ

²⁵ ՀՕ-441-Ն (2022). «ՀՀ կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը» հաստատելու մասին.

վերցված է՝ <https://www.irtek.am/views/act.aspx?aid=156043>

²⁶ ՀՀ Կառավարություն (2021). Հրաման N 136-Ն. Հայաստանի պետական չափորոշիչի հաստատման կարգ. վերցված է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=149788>

սահմանափակվում է տնային գործերով, իսկ տղամարդկանցը՝ ակտիվ մասնագիտական ու ռազմական կերպարներով: Դասագրքերում ուսուցիչը ներկայացվում է միայն որպես կին, իսկ տղամարդ ուսուցիչներն անտեսված են: Նույնիսկ դպրոցական պարտադիր գրականությունում կին հեղինակների թիվը անհամեմատ փոքր է: Այս իրավիճակը սահմանափակում է սեռերի միջև հավասար հնարավորությունների իրացումը:

«Կրթության մասին» ՀՀ օրենքը²⁷ շեշտում է կրթության բովանդակության դերը հասարակության առաջընթացում՝ ուղղված երիտասարդների զարգացմանն ու ինքնադրսևորմանը: Սակայն դասագրքերում բացահայտվել են գենդերային անհավասարության դրսևորումներ: Դասագրքերում կանայք ներկայացված են որպես տնային գործերով զբաղվող, ամուսնության համար պայքարող կամ սահմանափակ դերեր ունեցող անձինք, մինչդեռ տղամարդիկ պատկերվում են որպես մասնագիտական ու ռազմական հերոսներ: Ուսուցիչները հիմնականում կանայք են, ինչը սահմանափակում է սեռերի հավասար մասնագիտական դրսևորումները:

Գրականության դասագրքերում նույնպես գերակշռում են տղամարդ հեղինակները, իսկ կին գրողները ներկայացված են նվազագույն չափով: Այս իրավիճակը հակասում է օրենքների սահմանած իրավահավասարության սկզբունքներին և սահմանափակում է սեռերի հավասար հնարավորությունները կրթության ոլորտում:

Երկրորդ բաժնում ամփոփված են հետևյալ արդյունքները.

Իրավահավասարության սկզբունքը տարբեր մակարդակներում դեռևս ներառված չէ կամ անավարտ է և պահանջում է մշակում:

Օրինակ՝ «Կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» ՀՀ օրենքներում և հարակից իրավական ակտերում, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում «Առաջին բուժօգնության, արտակարգ իրավիճակների և քաղաքաշտպանության ամբիոնի» կանոնադրությունում, Վ. Բոյունովի անվան պետական համալսարանի և Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի կանոնադրություններում²⁸ իրավահավասարությունը ներկայացվում է որպես մարդու իրավունքների պաշտպանության երաշխավորում և պարտականությունների հարգում: Առավել ներառական կարգավորում են նախատեսում Երևանի «Հայբուսակ» համալսարանի և Երևանի պետական բժշկական համալսարանի Էթիկայի կանոնագրքերը:

Մանկավարժական համալսարանի առարկայական ծրագրերում իրավահավասարության մասին ուսուցումը ներառված չէ:

Բարեվարքության սկզբունքը ներառված է ոլորտը կարգավորող իրավական ակտերում և բուհական կանոնակարգերում:

Համամարդկայնությունը՝ որպես արժեքային հիմք, ներառված է Հանրակրթության պետական չափորոշչում և այլ կանոնակարգերում, ինչպես նաև մանկավարժական համալսարանի ուսումնական ծրագրերում:

Երրորդ բաժնում ամփոփված են հետևյալ արդյունքները.

Ուստիկանական գործի կրթական ծրագիրը նպատակ ունի պատրաստելու մասնագետների, որոնք կկարողանան ապահովել մարդու իրավունքների պաշտպանությունը, հանցագործությունների կանխարգելումը և ընտանեկան բռնության դեպքերին պատշաճ արձագանքումը: Պետական կրթական չափորոշիչներում (ՊԿՉ) շեշտվում է ընտանիքում բռնության կանխարգելման և մասնագիտական Էթիկայի պահպանման կարևորությունը:

²⁷ ՀՕ-297 (1999). «Կրթության մասին» ՀՀ օրենք. վերցված է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=155043>

²⁸ ԵՊԲՀ (2021). ՊԲՀ կանոնադրություն. վերցված է՝ <https://ysmu.am/v2/wp-content/uploads/2023/04/9e4a25d0.pdf>

Կրթակարգում ներառված 30 մոդուլներից մի քանիսը անդրադառնում են ընտանեկան բռնության և գենդերային հավասարության խնդիրներին:

- Մոդուլ 1. «Մասնավոր իրավունքի հիմունքներ», ընդգրկում է կանանց և աղջիկների հանդեպ բռնության թեման:
- Մոդուլ 14. «Կրիմիոլոգիա», ներկայացնում է բռնի հանցագործությունների տեսակներն ու կանխարգելումը:
- Մոդուլ 25. «Համայնքային ոստիկանություն», շեշտադրում է քաղաքացիների վստահության ձեռքբերման և համայնքային խնդիրների արձագանքման կարևորությունը:
- Մոդուլ 29 և 30. անդրադառնում են ընտանեկան բռնության և թրաֆիքինգի կանխարգելմանը 88 ժամ տևողությամբ ուսուցմամբ:

Առարկայական ծրագրերը ներառում են գենդերային հավասարության, սոցիալական պատճառների և բռնություն գործադրողի հետ աշխատանքի վերաբերյալ հարցեր: Դրանք օգնում են սպաներին ձևավորելու հմտություններ՝ աշխատելու բռնության ենթարկված կանանց և անչափահասների հետ:

Բացի այդ՝ «Համայնքային ոստիկանություն» և «Քրեական իրավունք» առարկաներում շեշտվում են համայնքային վստահության ամրապնդումը և թրաֆիքինգի դեպքերի ուսումնասիրությունը: Այս կրթակարգը նպաստում է ոստիկանության սպաների գիտելիքների և հմտությունների ընդլայնմանը գենդերային հավասարության և բռնության կանխարգելման ուղղությամբ:

«ՀՀ կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագրում» կրթությունը դիտարկվում է որպես աղբատության, սոցիալական բևեռացման և հասարակական խնդիրների լուծման հիմնական գործիք: Այն նպատակ ունի ոչ միայն ապահովելու «կոշտ» գիտելիքներ, այլև զարգացնելու «փափուկ» հմտություններ՝ ներառյալ գենդերային անհավասարության կանխարգելումը: ՆԳՆ կրթահամալիրի կրթական ծրագրերում իրավահավասարության ներառումը կարևոր է բռնության կանխարգելման, բողոքարկման միջավայրի ստեղծման և գենդերային հավասարության ապահովման համար:

Կրթահամալիրի 30 մոդուլներից յոթը վերաբերում են իրավունքի տարբեր ոլորտներին, որոնցից հինգը ընդգծում են իրավահավասարության կարևորությունը: Օրինակ՝

- Մոդուլ 5. անդրադառնում է իրավունքի եռթյանը և դրա հասարակական կիրառմանը:
- Մոդուլ 6. ՀՀ Սահմանադրական իրավունք, քննարկում է սեռերի հավասարությունը:
- Մոդուլ 10. Քրեական իրավունք, ուսումնասիրում է սեռական անձեռնմխելիության պաշտպանությունը:
- Մոդուլ 26. Մարդու իրավունքներ և ոստիկանություն, կենտրոնանում է ընտանեկան բռնության և խտրականության բացառման վրա:
- Մոդուլ 11. Քրեական դատավարություն, անդրադառնում է անձնական տվյալների պաշտպանությանը:

Ոստիկանական կրթության պահանջներն ընդգծում են ապագա սպաների հմտությունների բազմակողմանի զարգացման անհրաժեշտությունը, ինչպիսիք են՝ հաղորդակցման հմտություններ, էթիկա և բարեվարքություն, գաղտնիության պահպանում, հակակոռուպցիոն միջոցառումներ: Մոդուլները քննարկում են ոստիկանների դերը մարդկային փոխհարաբերություններում և թրաֆիքինգի դեպքերում ներառելով վստահության և իրավահավասարության հարցերը:

Վերապատրաստումները ներառում են ֆորմալ և ոչ ֆորմալ ձևաչափեր՝ պետական ատեստավորումներ, վերապատրաստումներ, միջազգային և քաղաքացիական հասարակության դասընթացներ, ինչպես նաև ինքնակրթություն:

Ըստ «Ոստիկանական գործ» մասնագիտության՝ ոստիկանները պարտավոր են հինգ տարին մեկ ատեստավորվել՝ շարունակական կրթությունն ապահովելու համար: Գենդերազգայնության հատուկ դասընթացներ չեն անցկացվել, սակայն դասընթացներում ընդգրկվել են խտրականության արգելքի և իրավահավասարության թեմաներ:

Ըստ ՀՀ օրենքի՝ բուժաշխատողները պարտավոր են հինգ տարին մեկ անցնել ատեստավորում: Գենդերազգայնության վերապատրաստումներ չեն անցկացվել, սակայն դասընթացներում ներառվել են կանանց առողջության, բժշկական հոգեբանության և իրավունքի թեմաներ:



Կնոջ կերպարը «Մայրենի» և «Հայոց լեզու» դասագրքերում

Այսպիսով՝ կրթական համակարգում գենդերային թեմաները պակաս ընդգրկվածություն ունեն: Ուսուցիչների վերապատրաստման ծրագրերը հիմնականում շրջանցում են գենդերազգայուն մեթոդաբանությունը, ինչը սահմանափակում է խտրականության կանխարգելման և հավասարության խթանման հնարավորությունները:

Դասագրքերում առկա են գենդերային խտրականության տարրեր, որոնք ամրապնդում են կարծրատիպերը: Չնայած պետական չափորոշիչներում խտրականության բացառման պահանջներին՝ գենդերային հավասարության իրականացման մեխանիզմներ չկան:

Օրենքներում ու բուհերի կանոնադրություններում հաճախ բացակայում են գենդերային հավասարության կոնկրետ մեխանիզմներ, ինչպիսիք են՝ աշխատավարձերի հավասարությունը կամ սեռական ոտնձգություններից պաշտպանությունը: Գենդերազգայուն վերապատրաստումները սակավաթիվ են: Առողջապահական ոլորտում գրեթե բացակայում են նման դասընթացները, ինչը խոչընդոտում է բռնության ենթարկվածների նկատմամբ պատշաճ վերաբերմունքը:

«Գենդեր» եզրույթը հաճախ փոխարինվում է վերացական հասկացություններով՝ «համամարդկային արժեքներ» կամ «ներառականություն», ինչը թուլացնում է հավասարության ընկալումը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ
ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

**«ԿԱՆԱՆՑ ԵՎ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ՀԱՎԱՍԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԱՎԱՍԱՐ
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ**

1. Խտրականության արգելքը պետք է ընդգրկի խտրական վարքագծի տարբեր տեսակներ՝ ներառյալ ուղղակի և անուղղակի խտրականությունը, սեռական ոտնձգությունը, վիկտիմիզացիան, խտրականությունը՝ ըստ պատկանելության, կամ ասոցիատիվ խտրականությունը, կրկնակի խտրական վերաբերմունքը՝ պայմանավորված ուղեկցող հիվանդությամբ կամ հաշմանդամությամբ և այլն: Գենդերային բռնությունը նույնպես պետք է նշվի որպես խտրականության ձև:
2. «Ուղղակի գենդերային խտրականության» սահմանումը պետք է վերաձևակերպել՝ սահմանելով հետևյալ կերպ. «ուղղակի գենդերային խտրականությունը տեղի է ունենում, երբ առկա է պատճառահետևանքային կապ տուժող անձի սեռի և կիրառվող ոչ բարենպաստ վերաբերմունքի միջև, եթե այն չի հետապնդում օրինական նպատակ, կամ եթե կիրառված միջոցների և սահմանված նպատակի միջև չկա ողջամիտ համաչափության հարաբերակցություն»: Անհրաժեշտ է նաև վերաձևակերպել «անուղղակի խտրականության» սահմանումը և նախատեսել ավելի մանրամասն պարզաբանում՝ միջազգային չափանիշերին համապատասխան:
3. Օրենքից հանել ոչ խտրական վերաբերմունքի վերոնշյալ հիմքերը, ինչպես նաև վերացնել «Մինչև 18 տարեկան անձանց, հղի և մինչև մեկ տարեկան երեխա խնամող կանանց համար ծանր և վնասակար համարվող աշխատանքների ցանկը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի 2308-Ն որոշումը:
4. Ըստ Օրենքի՝ արգելվում է գենդերային կարծրատիպերի վերարտադրությունը զանգվածային լրատվության միջոցներով: Մինչդեռ «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքում որևէ կարգավորում այս կապակցությամբ առկա չէ: Օրենքի նշյալ դրույթը կիրառելի դարձնելու համար անհրաժեշտ է համապատասխան փոփոխություններ կատարել նաև «Զանգվածային լրատվության մասին» օրենքում:
5. Նպատակահարմար է «Վարչական իրավախախտումների մասին» օրենսգրքում նախատեսել գենդերային խտրականություն պարունակող հրապարակային ելույթների համար պատասխանատվության միջոցներ, նման իրակարգավորում պետք է պարունակի նաև ոչ նյութական վնասի հատուցման վերաբերյալ գլխում ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը:
6. Անհրաժեշտ է ներդնել քաղաքականությունների մշտադիտարկման գործուն ընթացակարգ՝ հստակ մատնանշելով ոլորտում ներգրավված յուրաքանչյուր մարմնի դերակատարությունը:
7. Անհրաժեշտ է մշակել և վարել սեռով տարբերակված, համակարգված և միասնական վիճակագրություն, որը լիովին այլ քաղաքականությունների նախագծման հնարավորություն կընձեռի: Անհրաժեշտ է նաև ավելի շատ տեղեկություններ կանանց և տղամարդկանց հատուկ խմբերի վերաբերյալ:
8. Նպատակահարմար է Օրենքը լրացնել հատուկ հոդվածներով, որոնք նախատեսում են գենդերային հավասարության ապահովման ուղենշային կարգավորումներ տնտեսական գործունեության, աշխատանքային, սոցիալական պաշտպանության, կրթության, առողջապահության բնագավառներում:
9. Նպատակահարմար է լրացնել Օրենքի Հոդված 13-ը, որը նախատեսում է հանրային

ծառայության մեջ գենդերային հավասարության երաշխիքները և սահմանված պահանջների խախտմամբ ընդունված ակտը, կամ նախատեսել թափուր պաշտոնների համալրման համար անցկացված մրցույթն անվավեր ճանաչելու հնարավորություն ոչ միայն դատական կարգով, այլ նաև վարչական կարգով: Որպես վարչական կարգով բողոքարկման համար իրավասու մարմիններ կարող են դիտարկվել Վարչապետի աշխատակազմին կից Քաղաքացիական ծառայության գրասենյակը՝ քաղաքացիական ծառայողների մասով, կամ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, որը հանրային ծառայության ոլորտում իրականացնում է բարեվարքության ստուգումն ու վերահսկողությունը:

10. Օրենքի հանրային ծառայության բնագավառը կարգավորող հոդվածը որևէ ձևով չի մատնանշում հանրային ծառայողների բարեվարքության համակարգը, որը ներդրվել է 2018 թվականին «Հանրային ծառայության մասին» նոր օրենքի ընդունմամբ, որի բաղկացուցիչ մասն է «Հանրային ծառայողի կանոնագիրքը», որն ընդունվել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից 2024 թվականի փետրվարի 6-ի N 02-Ն որոշմամբ: Առաջարկվում է դիտարկել բարեվարքության համակարգին և/կամ հանրային ծառայողի կանոնագրքին հղում կատարելու հնարավորությունը:
11. Նպատակահարմար է մշակել գենդերային հավասարության վրա պետական քաղաքականության, ծրագրերի և միջոցառումների ազդեցության գնահատման (ԳԱԳ) հատուկ կարգ:
12. Ձեռնարկել միջոցներ Կանանց հարցերով խորհրդի ինստիտուցիոնալ հզորացման համար, ինչպես նաև հետևել ու պահպանել խորհրդի և աշխատանքային խմբի հանդիպումների հաճախականությունը:
13. Ընդունել համապատասխան ենթաօրենսդրական ակտ՝ սահմանելով ՏԻՄ մակարդակով գենդերային քաղաքականության իրականացման օրինակելի կարգը:
14. Անհրաժեշտ է փոփոխություններ ու լրացումներ կատարել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի մեջ և նախատեսել թե՛ գենդերային փորձաքննության համար պատասխանատու մարմինը, թե՛ իրականացման կարգը: Նպատակահարմար է նման դրույթ նախատեսել նաև գենդերային ազդեցության գնահատման մասով:
15. Որպես արդյունավետ պաշտպանության միջոց նպատակահարմար է խտրականության գործերով ապացուցման բեռը դնել խտրականության հեղինակի՝ պատասխանողի վրա, ազատել նրան խտրականության գործերով պետական տուրք վճարելու պարտականությունից, որպես լրացուցիչ պաշտպանության միջոց ընձեռել ոլորտի ՀԿ-ներին իրենց շահառուների օրինական շահերը դատարանում ներկայացնելու հնարավորություն:
16. Անհրաժեշտ է ունենալ բողոքների քննման անկախ վարչական մարմին, կամ նման լիազորության ամբողջական գործիքակազմով պետք է օժտված լինի ՄԻՊ-ը, ինչը ներկայում չունի և խտրականության հարցերով զբաղվում է իր ընդհանուր մանդատի շրջանակում:

ՍԵՌԱԿԱՆ ՈՏՆԱԳՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ. առկա կանխարգելիչ և պաշտպանիչ մեխանիզմներն ու կարգավորումները

1. Սեռական ոտնձգությունից և բռնությունից պետք է պաշտպանված լինեն ոչ միայն գրանցված աշխատողները, այլ նաև փորձնակները, ուսանողները, կամավորները և այլն: Այս տեսանկյունից նպատակահարմար կլինեն փոփոխել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 3.3-րդ հոդվածն այնպես, որ պաշտպանությունը ներառի նաև վերապատրաստվող անձանց, փորձնակներին, ուսանողներին, աշխատողներին, որոնց աշխատանքը դադարեցվել է, ինքնազբաղված անձանց, կամավորներին, աշխատանք փնտրողներին և աշխատանքի համար դիմողներին:
2. ՀՀ աշխատանքային օրենսգրքում սեռական ոտնձգությանը վերաբերող իրավակարգավորման մեջ հստակորեն սահմանել հանրային և մասնավոր տարածքները, տարածքները, որտեղ աշխատողը վարձատրվում է, հանգստանում կամ ճաշում կամ օգտագործում սանիտարական, լվացվելու և փոխվելու հարմարանքները, գործուղումները, ճանապարհորդությունները, վերապատրաստումները, միջոցառումները կամ սոցիալական գործունեությունը, աշխատանքին առնչվող հաղորդակցությունը, գործատուի կողմից տրամադրված կացարանը, աշխատանքի գնալն ու վերադառնալը:
3. Նպատակահարմար կլինեն աշխատանքային օրենսդրությունում կատարել նոր փոփոխություններ ու լրացումներ և վերականգնել աշխատանքային նախկին օրենսգրքի 221-րդ հոդվածի բովանդակությունը՝ նախատեսելով ավելի մանրամասն կարգավորումներ սեռական ոտնձգության դեպքերի մասով՝ որպես աշխատանքային կարգապահության կոպիտ խախտում:
4. Աշխատանքում, ինչպես նաև առհասարակ, սեռական ոտնձգության օրենսդրական կարգավորման համար անհրաժեշտ է նախատեսել սեռական ոտնձգության դեպքերի վերաբերյալ բողոքների ներկայացման ու դրանց քննության կարգը և ներկայացման մեխանիզմները, ինչպես նաև պարտադրել կազմակերպություններին որպես պարտադիր փաստաթուղթ ունենալ սեռական ոտնձգության վերաբերյալ ներքին կանոններ: Բացի այդ՝ կարևոր է համապատասխան պետական վերահսկողության իրականացման հիմքերի, ինչպես նաև տուժողների իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությանն ու խախտված իրավունքների վերականգնմանն ուղղված մեխանիզմների առկայությունը: Անհրաժեշտ է ներդնել նաև բռնությունից և ոտնձգություններից պաշտպանության, այդ թվում՝ աշխատանքային վեճերի լուծման արտադատական միջոցներ և բռնության և ոտնձգության ենթարկված անձանց ներառել սոցիալական պաշտպանության շահառուների ցանկում:
5. Օրենքի որոշակիության տեսանկյունից նպատակահարմար կլինեն աշխատանքային օրենսգրքի 30-րդ հոդվածը լրացնել հատուկ դրույթով, ըստ որի՝ սեռական ոտնձգության դեպքերի նկատմամբ հայցային վաղեմություն չի տարածվում:
6. Նպատակահարմար է իրականացնել Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի գործունեությունը կարգավորող իրավական ակտերի փոփոխություններ ու լրացումներ, ինչպես նաև սույն տեսչական մարմնի ինստիտուցիոնալ հզորացում և տեսուչների շրջանում ոտնձգության վերաբերյալ վերապատրաստումներ: Հետևաբար կարևոր է նաև օրենսդրությամբ սահմանել բռնության և ոտնձգության նկատմամբ պատժամիջոցներ և լիազորել ԱԿՏՄ-ին դրա կիրառումը, մշակել գործիք, ուղեցույց, իրականացնել գործատուների, աշխատողների և համապատասխան մասնագետների՝

ներառյալ ԱՎՏՄ-ի անձնակազմի և դատավորների ուսուցում և բարձրացնել թիրախային խմբերի և լայն հանրության իրազեկվածությունը, ԱՎՏՄ-ի համար ապահովել ստուգման և քննության արդյունավետ միջոցներ:

7. Նպատակահարմար է լրացնել գենդերային քաղաքականության ռազմավարության նախագիծը՝ նախատեսելով թեմատիկ միջոցառումներ ինչպես բուհերում, այնպես էլ դպրոցներում, ինչպես նաև նախատեսել սեռական ոտնձգության դեմ քաղաքականությունների համատարած ընդունում ուսումնական հաստատությունների կողմից:
8. Անհրաժեշտ է ամրապնդել առկա մշտադիտարկման և կիրարկման մեխանիզմները, մասնավորապես թե՛ ԱՎՏՄ-ի և թե՛ ՄԻՊ-ի մանդատը բռնության և ոտնձգությունների դեմ գործողությունների ոլորտում, ինչպես նաև ամրապնդել գործնական աշխարհում բռնության և ոտնձգությունների դեմ պայքարի կանոնակարգերը՝ ներառյալ բողոքների և արտադատական աշխատանքային վեճերի լուծման մեխանիզմների ստեղծմամբ, ինչպես նաև տրամադրելով բռնության ենթարկված անձանց և դիմումատուներին բավարար իրավական, սոցիալական, բժշկական և վարչական աջակցություն, ինչպես նաև անհրաժեշտ պաշտպանություն:
9. Սեռական ոտնձգության դեմ պայքարի գործում անհրաժեշտ է ներառել արհեստակցական միություններին և տրամադրել ուղեցույց, ռեսուրսներ, ուսուցում կամ այլ գործիքներ աշխատավայրում բռնության և ոտնձգությունների վերաբերյալ՝ ներառյալ գենդերային բռնության և ոտնձգության իրազեկման նպատակով, ինչպես նաև իրականացնել իրազեկման արշավներ սեռական ոտնձգության դեմ:
10. Նպատակահարմար է նաև իրականացնել Կանանց հարցերով խորհրդի՝ որպես գենդերային հավասարության հարցերով ազգային մեխանիզմի ինստիտուցիոնալ հզորացմանն ուղղված քայլեր, որոնք կօգնեն նաև սեռական ոտնձգության վերաբերյալ պրակտիկ մեխանիզմների հարցը բարձր մակարդակով քննարկելուն և ընդհանուր ջատագովությանը:
11. Նպատակահարմար է սահմանել օրենսդրական երաշխիքներ բռնության և ոտնձգության ենթադրյալ դեպքերի շրջանակներում ներգրավված անձանց անձնական կյանքի և գաղտնիության պաշտպանության համար: Պետք է նաև ընդունել երաշխիքներ դրանց չարաշահման դեմ, ինչպես նաև սահմանել պատժամիջոցներ գործնական աշխարհում բռնություն և ոտնձգություն կիրառողների և գործատուների նկատմամբ, որոնք չեն ձեռնարկում ողջամիտ քայլեր բռնությունից և ոտնձգություններից պաշտպանվելու համար: Նման վերահսկողական լիազորությամբ կարող են օժտված լինել թե՛ Տեսչական մարմինը, թե՛ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համապատասխան ստարաբաժանումները՝ որպես ոլորտի պատասխանատու մարմին, որը նաև պատասխանատու է քաղաքականության մշակման համար:

**ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՈՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԻ ԲՆԱՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ԶՐԵԱԿԱՆ
ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐԷԻ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼՈՒՑ ՀԵՏՈ. միջազգային և ներպետական
կարգավորումների և դատական ակտերի վերլուծություն**

1. Ստեղծել միասնական տվյալների բազա, որտեղ կպահպանվեն բոլոր հանցագործությունների վերաբերյալ մանրամասն վիճակագրական տվյալները՝ ներառյալ սեռը, տուժող կանանց սեռական կողմնորոշումը, հաշմանդամության կարգավիճակը, առողջության խնդիրները և այլն:
2. Վարել պարտադիր վիճակագրություն բոլոր պետական կառույցներում (օրինակ՝ ոստիկանություն, քննչական կոմիտե, դատական դեպարտամենտ), ինչը կներառի նաև կանանց նկատմամբ բոլոր տեսակի բռնությունների վերաբերյալ տվյալների հավաքումը:
3. Իրավապահ մարմինների աշխատակիցների համար իրականացնել կրթական ծրագրեր, որոնք ուղղված կլինեն կանանց նկատմամբ բռնության, հատկապես սեռական և տնտեսական բռնությունների վերաբերյալ տվյալների հավաքման և հետաքննության արդյունավետ մեթոդներին:
4. Տալ հստակ ցուցումներ՝ խտրականության հիմքով հանցագործությունների, ինչպես նաև գեղդերային հիմքով բռնության դեպքերի վերաբերյալ դատական գործընթացներում միջազգային իրավունքի նորմերի կիրառման համար:
5. Ձևավորել համատեղ աշխատանքային խմբեր, որտեղ ներգրավված կլինեն հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ՝ պետական կառույցների հետ համագործակցելու և տվյալների փոխանակման մեխանիզմներ մշակելու համար:
6. Ապահովել տվյալների գաղտնիության պաշտպանություն՝ սահմանված միջազգային և պետական չափանիշերով, ինչը թույլ կտա հասարակական կազմակերպություններին տրամադրել ավելի մանրամասն և նկարագրական տեղեկություններ առանց գաղտնիության խախտման:
7. Դատական գործերի քննման ժամկետների կրճատում բռնության դեպքերին անդրադառնալիս՝ ապահովելով արագ և արդյունավետ դատական գործընթացներ:
8. Պաշտպանական որոշումների ավելի խիստ և հետևողական կիրառում՝ ներառյալ տուժողների պաշտպանվածության երաշխիքների, ինչպես նաև տուժողի իրավունքների պաշտպանվածության վերաբերյալ հստակ մեխանիզմների կիրառում:
9. Գեղդերային բռնության դեմ քարոզարշավների անցկացում՝ հասարակության իրազեկման, կանանց իրավունքների և նրանց պաշտպանության հնարավորությունների մասին տեղեկության տարածման նպատակով:
10. Կրթական ծրագրերի իրականացում դպրոցներում և բուհերում՝ գեղդերային հավասարության, մարդու իրավունքների և բռնության կանխարգելման վերաբերյալ:
11. Միջազգային կոնվենցիաների և պայմանագրերի ներդրում օրենքների և իրավակիրառ պրակտիկաների մեջ, ինչը կնպաստի պետության գործառույթների համապատասխանեցմանը միջազգային չափորոշիչներին:

Միջազգային լավագույն փորձի կիրառումը բռնության դեպքերի կառավարման և հետաքննության ընթացքում:

Այս առաջարկները կխթանեն կանանց նկատմամբ բռնության դեպքերի ավելի արդյունավետ արձագանքումը, արդարադատության մատչելիությունը և կնպաստեն գեղդերային հավասարության հաստատմանը Հայաստանում:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԻՄՔՈՎ ԲՈՂՈՒԹՅՈՒՆԻՑ ՏՈՒԺԱԾ ԱՆՁԱՆՑ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

1. Բացահայտված խնդիրները լուծելու և բռնության ենթարկվող կանանց աջակցության ծառայությունների վերաբերյալ տեղեկացվածությունն ու ընկալումը բարելավելու նպատակով անհրաժեշտ է մշակել թիրախավորված իրազեկման արշավներ՝ հաշվի առնելով ուսումնասիրության մեջ արձանագրված մարզային տարբերությունները: Այս արշավները պետք է իրականացվեն թվային հարթակներում, քանի որ մասնակիցները նախընտրում են առցանց տեղեկատվական աղբյուրներ, և պետք է շեշտադրեն ընտանեկան բռնության բոլոր ձևերի՝ ներառյալ հոգեբանական և տնտեսական բռնության նույնականացման կարևորությունը: Հասանելի և ճշգրիտ տեղեկատվության տարածման և ծառայությունների նկատմամբ վստահության ձևավորման նպատակով անհրաժեշտ է համագործակցել ոչ կառավարական կազմակերպությունների և համայնքների ղեկավարների հետ Գյումրիում, Երևանում և Սպիտակում:
2. Գյումրիում իրականացվող հատուկ իրազեկման միջոցառումները պետք է կենտրոնանան կանանց իրավունքների պաշտպանության վերաբերյալ առկա բարձր թերահավատությունը հաղթահարելու և տեղական աջակցության ծառայությունների առաջնության վրա՝ համայնքի վստահությունը վերականգնելու նպատակով: Մինչդեռ Երևանում և Սպիտակում, որտեղ աջակցության ծառայությունների վերաբերյալ կարծիքները համեմատաբար դրական են, արշավները կարող են նպատակ ունենալ հանրությանը կրթելու ավելի քիչ ճանաչված բռնության ձևերի վերաբերյալ և խրախուսել հասանելի ռեսուրսների օգտագործումը:
3. Անհրաժեշտ են նախաձեռնություններ, որոնք կուղղվեն ստիգմայի նվազեցմանը և աջակցության ծառայությունների նկատմամբ վստահության ձևավորմանը բոլոր քաղաքներում: Համայնքներում, աշխատավայրերում և կրթական հաստատություններում պետք է իրականացվեն կրթական ծրագրեր՝ ըմբռնման և աջակցության մշակույթը խթանելու նպատակով: Սա կարող է ներառել աշխատաժողովներ, սեմինարներ և առցանց ռեսուրսներ, որոնք կհարմարեցվեն յուրաքանչյուր քաղաքի մշակութային և սոցիալական համատեքստին: Այս խոչընդոտները հաղթահարելով և տեղայնացված մոտեցմամբ հանրային իրազեկումը բարձրացնելով՝ կարելի է զգալիորեն բարելավել աջակցության ծառայությունների արդյունավետությունը, ինչն ի վերջո կնպաստի աջակցության կարիք ունեցող կանանց համար ավելի լավ արդյունքների ապահովմանը:

**ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՍԲ ԲՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՈՂՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ**

Իրավական բնույթի առաջարկներ.

1. Դիտարկել ՀՀ Կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 23-ի N1225-Ն որոշման վերանայման հնարավորությունը և վերջինիս համապատասխանեցումը ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի գրասենյակի կողմից վիճակագրական նպատակներով մշակված՝ հանցագործությունների միջազգային դասակարգմանը՝ ICCS-ին:
2. Դիտարկել որդեգրման գաղտնիք հրապարակելու, ալիմենտ (ապրուստավճար) վճարելուց խուսափելու և ծնողների կամ այլ մերձավոր ազգականների և երեխայի միջև տեսակցության իրականացումը խոչընդոտելու արգելքի սպառնալիքները որպես հոգեկան ներգործություն:
3. ՀՀ ԶՕ 194-րդ (հոգեկան ներգործությունը) և 196-րդ (ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը) հոդվածները չեն ներառում տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաների միջոցով կատարված արարքները, հետևաբար առաջարկվում է լրամշակել դրանք՝ նշելով, որ տվյալ արարքները կարող են իրականացվել նաև ՏՀՏ-ի միջոցով:
4. Վերանայել ՀՀ քրեական օրենսգրքի 197-րդ հոդվածը և համապատասխանեցնել Ստամբուլյան կոնվենցիայի 37-րդ հոդվածի 1-ին մասին՝ սահմանելով ավելի խիստ պատժատեսակ այն դեպքերի համար, երբ տուժողն անչափահաս կամ անգործունակ անձ է:
5. Դիտարկել չափահասին կամ երեխային ամուսնանալուն հարկադրելու նպատակով այդ անձի քաղաքացիության կամ բնակության վայրի պետություն չհանդիսացող պետության տարածք մուտք գործելուն դիտավորությամբ գայթակղելու գործողությունը քրեականացնելու հնարավորությունը:
6. Ներառել ԿՍՕԽ-ը ԸԲ օրենքով նախատեսված բռնության որևէ տեսակում՝ ֆիզիկական կամ հոգեբանական:
7. Դիտարկել սեռական ոտնձգության դեմ բողոքների ներկայացման, քննության և դրանց արձագանքման կարգի մշակումը և ընդունումը:
8. Դիտարկել սեռական ոտնձգության կարգավորման հնարավորություն աշխատանքային գործունեության ոլորտից դուրս:
9. Սեռական ոտնձգության սահմանման մեջ ներառել նաև տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաների միջոցով կատարված ոտնձգությունը:

Կազմակերպական բնույթի առաջարկներ.

1. Կազմակերպել քննարկումներ շահագրգիռ կողմերի հետ՝ ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի գրասենյակի կողմից վիճակագրական նպատակներով մշակված՝ հանցագործությունների միջազգային դասակարգման՝ ICCS-ի վերաբերյալ, դիտարկել ICCS հնարավոր տեղայնացման աշխատանքները:
2. Վաղ ամուսնություններին կամ երեխայի ամուսնություններին վերաբերող գործերով իրականացնել դատական մշտադիտարկում և վերանայել դատական պրակտիկան:
3. Ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ վարելու ԿՍՕԽ-ի վերաբերյալ վիճակագրություն:
4. Ձեռնարկել միջոցներ, որպեսզի առցանց կամ թվային միջոցներով կամ թվային ոլորտում իրականացված վերոգրյալ արարքը (cyber stalking) հստակ արտացոլված լինի ընդհանուր վիճակագրական տվյալներում:

